



12004



ԱՐԻՍՏՈՒՆԻ

ԻՆՆԵՐԻՆԻ ԿՏՈՍԻ

ԿԵՆՈՆԻՔ



99/537

402-64

402-64

ՍՐԹՈՅ ՀՕՐՆ

ԲՆՆԵՂԻԿՏՈՍԻ

ԿԵՆՈՆՔ

ՋՈՐԹԱՐԳՄԱՆԵԱԼԷ

ԸՇԱԿԵՐՏԸՑ ՄԵԾԻ ՀՕՐՆ

ՄԻԻԹԱՐԸՅ

ԹՐՈՒՆ. Զ. ԿԻՐՈՍՏՅԱՆ ԱՅԿՆԱՆՆԵՐ

4057



Պրինտեր Կ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ի ՎԻԿՆԵՆ

Ի ՎԿՆԵՆ ՊԱՇՏՊԱՆ Ս. ԸՍՏՈՒԼՆԵԱՆՆԵՐԻ

1842

262.1



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Եթէ զազնուականութիւն որ գրոց կանոնացս կամփցի առնուլ ի միտ, ուչ եղեալ նայեացի ընդ նա որ գրեացն թէ որպիսի որ էր այրն, եւ ընդ այնոսիկ որ ընդ նորին կանոնօրն պայծառացան. եւ անդէն տայցէ իրաւունս մերոյ փութոյս որով եկաք ի թարգմանեւ զսոյն:

Ի քրոնիկոն կանոնս անդ կենաց սրբոյ մատենադրիս զնկարագիր ճշգրիտ եւ զհամառօտ իւրոց վարուցն դասնիցես: Հայիցիս ընդ նա անդստին ի տղայ ախոյն զզգաստութեան սիրով հարեալ, եւ չգտեալ դադար ստիցն ի վերայ ալեացն ծփանաց ըստ օրինակի աղանոյն փախտական յանապատն դիմեալ, եւ յանմայութեան անդ նորափետուր զողիսն զարդարեալ վառեալ թաուցեալ, լի մարդարեութեանն պարզեւօրն: Չարմասցիս ընդ նա, իրբեւ տեսանիցես նորակերտ նորանչան զարմանալեօր որոց ոչ գուցէ թիւ, պատուեալ յաստուածակոյս կողմանէ: Իսկ իրբեւ ի կասինեան նուիրական լերինն ընդ կասազատութեան տեսանիցես ի ճակատ մտեալ, ընդ սասակութիւն բռնութեան առաքելութեան ոգւոյն հիացեալ զարմասցիս:

Իսկ զի՞նչ որ զյաճախելոյ վաներոյն ստիցէ, որ ի սակաւ ժամանակի ի նմանէ շինեցան, եւ զբազմամբոխ գնդաց վանականացն որով ծաղկալից ծաղկազարդ ամայութեան վայրբն զարդարեցան, եւ ոչ սրբութեամբ միայն

երեւելիք, այլ եւ ուսմամբք եւ իմաստու-  
 թեամբ հոյակապք ընդ ամենայն աշխարհ է-  
 ղեն: Քանզի հրաման էր սրբոյ վարդապետիս  
 իւրոց արեղացիցն, զի մի գատարկասունս ու-  
 սանիցին, զերեւելի երեւելի մատենադրաց  
 գրոց զօրինակսն գրել, եւ զայնսոսիկ փութով  
 յօժարութեամբ ի տան դանձի գրոց եղեալ  
 պահել: Սովին գեղեցիկ կարգաւ գպրութեան-  
 ցնն որ ի վեցերորդում գարու անդ տակաւ  
 նուազէր եւ ամենեւին ի վերջին կործանումն  
 բերէր ի միտ, հաւատարիմ պահապան լինէին  
 բնեղիկական մատենադարանքն. ուստի եւ  
 յիրաւի համօրէն եւրոպացւոյ աշխարհն իմաս-  
 տութեան իմասնոց սրբոյ Հօրս շնորհակալ  
 լինիցի: Այլ առաւել քան գպրութեամբք,  
 մեծարոյ երեւեցան վաներս նշանաւոր ա-  
 բամբքն որ ի նոցանէ ընծայեցան: Քանզի ետ  
 Բենեդիկտոս սրբոյ Եկեղեցւոյ յորդեկաց ան-  
 զի իւրոց Առաջնորդս եւ Եպիսկոպոսունս եւ  
 Վարդապետս ծիրանազգեստս եւ Քահանայա-  
 պետս իսկ ի գլխովին. եւ առաւել քան զայ-  
 սոսիկ, արս բազումս զարմանալիս սրբական  
 վարուք եւ խոսամբերութեամբ. զորոց չէ  
 իսկ հարկ զանուանս մի ըստ միսլէ յիշատա-  
 կել:

Ապա թէ այդ այդպէս իցէ, գործ աւելի  
 համարիմ վասն Վանոնացս շատ խօսել, զորս  
 առ հանապազորդ յիշատակի վանականաց  
 գրեաց Երանելիս: Չի եթէ ի պողոց անտի  
 ծառն ծանիցի, ապա սրչափ հաստատութիւն  
 ամբութեան համարիցի որ ունել արմատոյն  
 որ սյսչափ մեծարեւծ բարձրութեան ծառոյն  
 եւ ծանրաբեռն ծանրութեան սրողոցն բաւա-  
 կան եղև տակալ տանել: Մանուանդ իսկ,  
 զի եւ այնչափ վկայութիւնք որ իսկզբան կա-  
 նոնացս եղեալ կայցեն, բարձրարարաւս գո-

չիցեն, եւ բաւական իցեն հաւանեցուցանել  
զմտաւարժս. զի եւ վիպքն ոչ դուզնարեացք  
ինչ եւ աննշանք որ, այլ Չօրաւարք իմաս-  
տունք եւ Արդարակտք եւ Եպիսկոպոսունք  
եւ Ժողովք եւ Քահանայապետք: Իսկ ի նոսին  
իսկ ի գիրսն որ թէ նայիցի, մանաւանդ զիմաս-  
տութիւն օրէնսդրին իմասցի, որ զգլթութիւն  
յաջմէ ունի եւ զարդարութիւն ի ձախմէ. զգը-  
թութիւն ամենեւին շարամեցուցանէ, եւ ար-  
դարութեանն շոտյ բողոքել: Նմին իրի իսկ  
ոչ միայն յիտաղացուց աշխարհին, այլ եւ  
ընդ բնաւ արեւմուտս սոյն կանոնք սփռեալ  
ինամով պահին. եւ այնչափ ազգի ազգի եւ  
մեծամեծ Միաբանութիւնք աւելի քան զքսան  
զսոյն կանոնս ունին իւրեանց առաջնորդս մին-  
չեւ ցայս օր:

Այլ չէր պատշաճ մեծապայծառ ճրագի կա-  
նոնացս ի մուտս եւեթ արեւու լուսատու լի-  
նել, այլ եւ զարեւելս որ ի լուսոյ իւրոց  
առաջին վանականութեան կարգացն զրկեալ,  
յուսմունս պէտպէսս եւ օտարասիս իրբեւ ի  
խաւարի դանդաշէր, իւրով քաղցրահայեացն  
ճառագայթիւք լուսաւօր առնել: Ուստի եւ  
մեծարեալ Հայրս մեր Միթիթար իրբեւ կա-  
մերն նորոգել զկարգս վանականաց եւ ի Հայս,  
զկանոն սրբոյս ընտրէր իւր առաջնորդ յամֆ  
հազարերորդի եւ թնհարիւրորդի երկուսասա-  
ներորդի հայեցեալ ի մարդասիրութիւն կար-  
գացն, մանաւանդ եւ յայն զի կրթութեան  
մանկուոյ եւս իւրաս տան միտ դնել այս կա-  
նոնք:

Թարգմաննել թարգմանեցան կանոնքս այս  
ի մեր բարբառ. այլ թէ արդարեւ, որպէս  
բաղմաց կարծիք աւանդեն, սրբոյն Ներսէսի  
Լամբրոսնացուոյ իցէ թարգմանութիւնն, մեր  
ստուգիւ ինչ ասել ոչ ունիմք: Աերպա-

բանք բանիցն, որպէս ոմանց հաճոյ թուի՝  
Լամբրոնացւոյն լինելոյ կարծիս տան. այլ բա-  
զում մասամբք պակասութիւն կանոնացն եւ  
կարի իմն այլակերպութիւնք ի բուն հոռո-  
մարէն օրինակէ անտի, որպէս ամենեցուն որ  
զնա ընդ մերումս համեմատիցեն, յայտ յան-  
գիման երեւի, բազում երկեւան երկմտութեան  
իներքս մուծանեն կասկածել, թէ դուցէ բնաւ  
այլ որ անակզեակ հոռմայեցւոց բարբառոյն  
թարգմանեալ իցէ, կամ թէ դպրաց տգիտաց  
ինչ ինչ յաւելեալ ի բուն թարգմանութիւն  
անդր եւ բազում ինչ հատեալ անտի ի բաց,  
կամ մեր օրինակս թերի իցէ, կամ թէ այլ  
ազգ ինչ: Էր եւ այլ թարգմանութիւն յութ-  
եւտասներորդում դարու անդ, որ թէպէտ  
եւ չէր թերակատար իրրեւ զառաջինն, այլ զի  
չէր օրինօք թարգմանութիւնն եւ բնաւ իսկ  
զժուարին առ իմանալ միտք բանիցն էին, մեզ  
պարտ եւ պատշաճ թուեցաւ նորոգ թարգմա-  
նել զամենայն ի հոռոմէ անտի ի հայ. զի մի յայս-  
չափ շահաւէտ կարգաց զրկեցուք ոչ միայն  
մեք որ յանուն սրբոյ Հօրս, որ այսց կանոնաց  
յօրինիչս է, ընծայեցաք. այլ եւ ամենեքին որ  
կամիցին կանոնեալ կարգօք եւ յօրինեալ յար-  
գարմամբք ի Քրիստոս կեալ: Որով իցէ թէ  
եւ ի մերում ազգիս պողարեր լինէր մատեանս  
ըստ յաճախութեան արդեանց տահմականացն  
զոր յայլ ազինս տեսանեմք:

## Ը. Պատմութիւնս վերջնականի:

Նշեն նախ քան զսուրբն Ռենեդիկոսս վանաց շարք եւ նոցին խրատիչք, զոր օրինակ եւ յառաջ քան զՎրիստոս օրէնսդիր եկաց Սովսէս: Վարչոք էին օրէնքն եւ սուրբ, զոր յուղայեան ժողովրդեան երեր ած նա. այլ Վրիստոս զեւս ազնուագոյնսն քրիստոսիկեաց ժողովրդեանս մատոյց: Նոյնգունակ եւ արք սուրբք որ ի ժամանակի սորա կացին, ըստ տուելոյ նոցա յՆստուծոյ շնորհացն, վանականաց օրէնս կարգեցին. իսկ շայրս եւ օրէնսդիր Ռենեդիկոսս, զոր օրինակ առաւել եւս շնորհս յՆստուծոյ առ, նոյնպէս եւ ազնուագոյնս եւս օրէնս եղ. զի զոր նոքայն կանխեցին սակաւ կամ աւելի ասել քան զայն զոր պարան էր առնել, եւ կամ թոյլ ետուն լինել, զայն սա յետ նոցա յերիւրեաց ած յուղուլթիւն. Ռան. Ս. Ռեն:

Գ. Ի վարոց սրբոյն Սրահէ :

Օգանձոնն որ ի կանոնաց պահպանութեան անդ զօղեալ կան, ած յայտ վանականաց. եւ իւրով եւ բազմաց օրինակաւ ուսոյց եթէ չիք ինչ ի կատարման նորա անպատեհ ցածուն ոգւոյ, անպիտան ի յառաջադէմն նկրտելոյ, դժուարին այնմ որ հաւատայցէն, կամ խիստ որում ապաշխարիցէ :

---

Գ. Աստիճիտանս Ապիւնոյս :

Աէր սուրբն փուղկենտիոս. փութասջիւր միշտ ըստ կանոնաց Հարց կեալ, այլ առաւել եւս ըստ կանոնի սրբոյ խոստովանողին Յենեղիկտեայ : Մի խտորեցիս անտի ուրեք, եւ մի յաւելուցուս ինչ յայն. զի զամենայն ինչ որ բաւականն է, ունի, իսկ պակասութիւն ոչ ուրեք. որոյ բանք եւ պատուիրանք յերկնից արքունիսն տանին զայնոսիկ որ զհեան դնայցենն նոցա : Աստիգ. Ապ. որ եկաց յամին 600 :

---

Դ. Աստան Սեբեթիւնայ :

Հարցեալ ցմեծ զօրաւարն Ատրուրիայ ցԱսամոս, եթէ ընդէր այնչափ յաճախ զսրբոյն Յենեղիկտոսի կանոնս յա-

Տիցէ ի ձեռին, ետ պատասխանի եթէ  
զայդ յայն սակս առնեմ, զի յայնչափ  
զգաստութեան կարգաց այսի սրբոյ  
Հօրն առնում ես հնարս պատշաճականս  
յոյժ ժողովրդեանս որ յիսն հաւատա-  
ցան: Այս այն այր է որ նովին կանո-  
նաւ զկարգ առնել ձիոյ հաստատեաց:  
ԹՎովմ. Վաղեա. ի դիրսն որ անուա-  
նեալ կոչի Աբեղայ. Ա. Ղպ:

---

Ե. ԺԱՂՉԷ ԱՌԻՍՏՐՈՒՆԷԱՆ:

Հարց վանիցն կամ արեղայից այն-  
պէս պարս է լինել, զի զոր կանոնա-  
կան կարգք կամ սրբոյն Վենեգիկոսոսի  
կանոնք ուսուցանիցեն, եւ շնուցուն  
եւ պահիցեն յամենայնի: Վանդի ե-  
թէ այս ամենայն ըստ օրինին պահիցի  
յերիցանց անախ վանացն կամ յարե-  
ղայից, եւ վանականաց թիւ Տեառն  
օգնականութեամբ աճեցի, եւ աշ-  
խարհս համօրէն նոցա ստեպ ստեպ ա-  
ղօթիւքն յեղծադործն ապականու-  
թեանց կարճեցի: Վումարեալ յամին  
670 առ Ղեւոզեղարեաւ. Վանոն. ԻԵ:

---

Զ. ՈՐԷՔԱՆՍ ՈՒՄԷՐՈՐԴ:

Որ ինչ ի վարս սրբոցն արժանին մա-  
նութեան կայցէ, որ ինչ բարձր ընդ

Հաւատոցն լուսով, ի ձեր կոչումն անդր  
հայի: Շնորհք հոգեւորք, որ զայլ  
կարգոն սուրբ առնեն բաղձապատիկ  
օրինակաւ իւրեանց սուանց հասանելոյ  
ընտրութեանն, մասն մի են ի լու-  
թենէ անախ շնորհացն որ ձերոյ կար-  
գիդ բաշխեալ են. այնու զի որ այսր  
կարգի յօրինիչս է, լի էր հոգւով ա-  
մենայն արդարոց: Աւրբան. Ը. Հրո-  
վարտ:

---

Լ. Սորբն Գրեգոր Լ.:

Ես Գրիգորիսս սրբոյ Հովմէական  
Եկեղեցւոյ Լուսնորդ, գրեցի զվարս  
երանելոյն Իննեդիկասօի, եւ ընթեր-  
ցայ զՎանանսն զորս ինքն Սուրբն իւ-  
րով ձեռամբն գրեաց: Վովեցի զնո-  
սս եւ հաստատեցի ի սուրբ ժողովի.  
եւ ընդ այլ եւ այլ կողմանս խաղաց-  
ւոց աշխարհին եւ ուր ուրեք հօռամա-  
րեն դպրութիւնք ընթեռնուցուն, գուլ  
եւ պատուէր ետու, զի զգուշութեամբ  
պահեսցեն, որք միանգամ ի շնորհս  
դարձի մատչել հանդերձեալ իցեն մին-  
չեւ ի կատարած աշխարհի: Գրիգ. Լ.  
Վան հաստատ. Վան. Ս. Իննեդ:

---



Մ Բ Ռ Յ Հ Օ Ր Ն

Բ Ե Ն Ե Դ Ի Ի Կ Տ Ո Ս Ի

Կ Ե Ն Ո Ն Ք

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Լ ՈՒՐ որդեակ, պատուիրանաց վարդապետի<sup>Է</sup>, եւ խոնարհեցս զլսելիս սրտի քո, եւ զյիշատակ յուշարար յաճախագութ հօր ակտրժեւով ընկալջիր եւ հաստատութեամբ կատարեա. զի յայն, յորմէ անհնազանդութեան դանդազանօքն հեռացեալ մեկնեցար, հրնազանդութեան վաստակովք անդրէն դառնայցես:

Արդ առ քեզ այժմիկ են բանքս, որ ի քոց կամաց ուրացեալ, եւ Տեառն Եփուսի ճշմարիտ թագաւորին հանդերձեալ զինուորել, զհնազանդութեան հզօր եւ զմեծապայծառ զէնսն առեալ ունիս:

Առաջին քան զամենայն. յոր ինչ բարի եւ ձեռն արկանիցես, ստեպ ազօթիւք խնդրեսջիր, զի ի նմին կատարեալ գացիս. զի մի, որ արժանիս արար զմեզ ի թիւ ի համար խառնել իւրոց որդե-

կայն, ի շարեաց դործոց մերոց արամի-  
ցի: Օ ի յամենայն ժամ այնպէս պարտ  
եւ պատշաճ է մեզ հնազանդ լինել  
Տեառն փանն բարութեանցն իւրոց զոր  
մեզն առնէ, որպէս զի ոչ միայն որպէս  
զհայր ցասուցեալ զմեզ զորդեակնն իւր  
ի ժառանգութենէն երբեք չհանիցէ,  
այլ զի եւ ոչ իրբեւ զտէր ահաւոր գրթ-  
գուեալ ի մերոց շարեաց աստի իրբեւ  
գշար ծառայոն, որ ոչն կամիցին զհեա  
երթալ փառաց նորա, յանձահ տան-  
ջանսն մասնեցէ:

Օ շարթիցուք այսու հեա եւ առ ան-  
գամ մի, զոր օրինակ զարթուցանեն  
զմեզ Գիբբ, յորժամ ասիցեն, թէ  
Լրդ ժամ իսկ է ի քնոյ զարթնուլ<sup>1</sup>:  
Եւ բացեալ զաչս մեր նայեացուք  
յաստուածեղէն լոյսն, եւ ունկնդիր  
լիցուք զողութեամբ ձայնին Լստուծոյ  
բարբառելոյ առ մեզ զոր հանապաղ-  
եւ լուիցուք զինչ նայն խօսիցի, յոր-  
ժամ ասիցեն, թէ Լսոք եթէ ձայնի  
նորա լսիցէք, մի խստացուցանէք զօր-  
արս ձեր<sup>2</sup>: Եւ դարձեալ, թէ Լր ու-  
նիցի ականջս լսելոյ, լուիցէ զինչ Հո-  
գին ասէ առ եկեղեցիս<sup>3</sup>:

Եւ զի նչ ասիցէ. Եկայք, որդեակք  
իմ, լուարուք ինձ, եւ զերկեւզ Տեառն  
ուսուցից ձեզ<sup>4</sup>. Գնացէք մինչ գեռ  
զլոյսն ունիք, զի մի խաւար ձեզ հասցէ<sup>5</sup>:

Այլ խնդրեալ Տեառն զիւր մշակն ի  
 բազմամբոխ ժողովս ժողովրդեանն ու-  
 բում զայս բարբառի, ասէ դարձեալ .  
 Ո՞վ է մարդ որ կամի զկեանս, սիրէ զա-  
 ւուրս իւր տեսանել ի բարութեան<sup>6</sup> :  
 Արում եթէ լուեալ քո, տայցես պա-  
 տասխանի, թէ Աս . ասիցէ ջքեղ Աս-  
 տուած . Աթէ կամիս զճշմարիտ եւ զյա-  
 ւիտենից կեանսն յանձին ունել, Վռեցս  
 զլեզու քո ի շարութենէ, եւ շրթունք  
 քո մի խօսեացին զնենդութիւն : Խոտո-  
 բեա ի շարէ եւ արա զբարի, եւ երթ  
 զՏեառնորա<sup>7</sup> : Օչայս թէ առնիցէք, Վշք  
 իմ ի վերայ ձեր, եւ ականջք իմ ի վե-  
 րայ աղօթից ձերոց<sup>8</sup> : Այլ եզիցի մինչ շեւ  
 կարգացեալ իցէ ձեր առ իս, ասացից .  
 Վւասիկ եմ<sup>9</sup> : Օ ինչ առաւել հեշտա-  
 կան քան զայս ձայն Տեառն, որ հրաւի-  
 բէն, կոչցէ մեզ սիրելիք : Ահա քաղ-  
 ջրութեամբ իւրով ցուցանէ մեզ Տէր  
 զճանապարհ կենաց :

Այսու հետեւ հաւատովք եւ բա-  
 րեացն դործովք, պնդեալք զմէջս, եւ  
 ազուցեալ զսաս՝, առաջնորդութեամբ  
 Վւետարանին<sup>10</sup> զճանապարհսնորա զբ-  
 նասցուք . զի զնա որ կոչեացն բզ-  
 մեզ, յարքայութեանն իւրում արժանի  
 լինիցիմք տեսանել : Յորոյ արքայու-  
 թեանն խորանսն բնակել ոք թէ կա-  
 մի, եթէ ոչ դործովք բարեաց անդր

րնթանայցէ, այնմ շմարթի հասանել :  
 Այլ հարցցուք եւ զՏէր ընդ մարդա-  
 րէին եւ ասիցեմք զնա. Տէր, ո՞վ կաց-  
 ցէ ի խորանի քում, կամ ո՞վ բնակեա-  
 ցէ ի լեռան սուրբ քո<sup>11</sup> : Օչայս հար-  
 ցեալ, եղբարք, լուիցուք Տեառն պա-  
 տասխանույ, որով զճանապարհն ընդ  
 որ ի խորանան իւր զնայցեմք, զուցա-  
 նէ մեզ . Ար զնայ, ասէ, անբիծ, գոր-  
 ծէ զարդարութիւն. խօսի զճշմարտու-  
 թիւն ի սրտի իւրում. որ ոչ նենգա-  
 ւորեաց լեզուաւ իւրով եւ շար բնկերի  
 իւրում ոչ արար . նախատինս ի մեր-  
 ձաւորաց ն.օ ոչ առնու<sup>12</sup> : Ար զբանս-  
 արկուն շար, յորժամ ոչ պատշաճ  
 ինչ իրաց մատուցեալ թելադիր նմա լի-  
 նիցի, իւրովք իսկ թելադրութեամբ  
 քրն ի սրտէն ի բաց թքեալ յոչինչ  
 զնիցէ, եւ զմանկունս խորհրդոց նորա  
 առեալ, ընդ վէմն Քրիստոս հարեալ  
 փշրիցէ : Ար երկիցենն ի Տեառնէ եւ  
 վասն իւրեանց պահպանութեան օրի-  
 նաց ոչ ամբարհաւաճեն, այլ խոստո-  
 վան եղեալ, թէ բարութիւնքն որ ի  
 նոսա իցեն, ոչ յանձանց ինչ քաջու-  
 թենէ են, այլ ի Տեառնէ, զայն որ  
 յաջողէն ի նոսա զՏէրն մեծացուցանի-  
 ցեն . զմարդարեւկանն բարբառելով,  
 թէ Մի մեզ, Տէր, մի մեզ, այլ անուա-  
 նրդ քում ասր զփառս<sup>13</sup> : Արպէս եւ

Պատգոս առաքեալ ոչ անձին ինչ շուք  
 եղ վասն քարոզութեանցն, այլ ասէ .  
 Շնորհօքն Վատուծոյ եմ զինչ եւ իցեմ<sup>14</sup> :  
 Աւ գարձեալ, թէ Ար պարծիցին, ի  
 Տէր պարծեցի<sup>15</sup> : Վսին իրի իսկ ասաց  
 Տէր յԱւետարանին. Ար լսէ, ասէ, զբանս  
 իմ զայսոսիկ եւ առնէ գնոսա, նմանեա-  
 ցի առն իմաստնոյ, որ շինեաց գտուն իւր  
 ի վերայ վիմի . իջին անձրեւք, խաղա-  
 ցին գետք, շնչեցին հողմք եւ բախեցին  
 գտունն, եւ ոչ կործանեցաւ . քանզի ի  
 վերայ վիմի հաստատեալ էր<sup>16</sup> :

Օայսոսիկ Տեառն ի գլուխ հանեալ,  
 կայ մնայ զօր հանապաղ, զի դործովք  
 մերովք սրբոց խրատուցն իւրոց տացուք  
 պատասխանի : Վանզի յայս սակս իսկ  
 ձգին յերկարին մեզ աւուրք կենաց մե-  
 րոց, զի ի չարեաց ուղղեացուք, որպէս  
 եւ վկայեաց Վաւրեալ . Չգիտիցես,  
 ասէ, զի քաղցրութիւնն Վատուծոյ  
 զքեզ յապաշխարութիւն ամէ<sup>17</sup> : Վասն  
 այսորիկ եւ Տէր իսկ ասէ զթաճն եւ  
 սղորմած . Աչ կամիմ զմահ մեղուցելոյն,  
 այլ զի դարձցի եւ կեցուցէ զանձն իւր<sup>18</sup> :

Արդ հարցեալ զՏէր, եղբարք, թէ  
 ո՞րն անհեցէ ի խորանի քում, լուսք  
 զպատուէր բնակելոյն . այլ թէ զբնակ-  
 շի դործան ի գլուխ հանիցեմք, ար-  
 քայութեանն երկնից լինիցիմք ժա-  
 ոանգորդ : Պատրաստեացուք այսու հե-

տեւ զսիրտս մեր եւ զմարմինս , որ ընդ  
 սրբոյ Հնազանդութեանն հրամանօք  
 հանդերձեալս եմք զինուորել . եւ զոր  
 վճարել մերով բնութեամբս տկարա-  
 նամք , աղաչեսցուք զՏէր , զի հրաման  
 տացէ շնորհաց իւրոց ի թիկունս հասա-  
 նել տկարութեանս մերում : Արպէս զի  
 թէ ի պատժոց զեհննին ապրել եւ ի  
 կեանսն մշանջնաւորականս մտանել  
 կամիցիմք , մինչ դեռ պարտպ կայ մեզ  
 եւ յամեմք ի մարմնի աստ , եւ ի լոյս  
 կենաց մերոց մարթի զայս ամենայն  
 վճարել , փութացուք , զի որ ինչ մեզ  
 ի յաւիտեանսն յօգուա լինիցի , զայն  
 այժմէն առնիցեմք :

Եւ արդ պարտ եւ պատշաճ է մեզ  
 այսու հետեւ դպրոցս իմն վասն Աստու-  
 ծոյ ծառայութեանն կարգել . եւ ակն  
 ունիմք թէ ոչ խիստս ինչ կամ ծանր  
 օրէնս դնիցեմք : Ապա թէ իցէ ուրեք ,  
 զի խիստս ինչ բտտ արդարութեան ի-  
 բաւանցն պահանջելոյ սահմանեալ ի-  
 ցէ առ ի շարեաց ուղղութիւն կամ  
 վասն սիրոյն պահպանութեան , մի ան-  
 դէն զահի հարեալ ի բաց ի փրկութեան  
 ճանապարհէն սրանայցես . ընդ որ մը-  
 տանել զք թէ կամի , ընդ նեղ<sup>19</sup> եւ ընդ  
 նուրբ սկիզբն պարտի անցանել . եւ յետ  
 այնորիկ ի ձեռն սրբական վարուց եւ  
 ստոյգ հաւատոց , առատ սրտիւ եւ

անձառ սիրոյն քաղցրութեամբ ար-  
 թուն եւ զուարթուն այնու հետեւ ընդ  
 ճանապարհ պատուիրանացն Աստուծոյ  
 ընթանայցէ: Արդէս զի ի նորա վար-  
 դապեաութենէն մի բնաւ խոտորեա-  
 ցուք. այլ մինչեւ ի սպառ յուսումն նորա  
 ժուժկակալ, շարշարանացն Վրիտաոսի  
 համբերութեամբ հաղորդ լինիցիմք, զի  
 եւ արքայութեան նորա արժանի եղե-  
 ցուք զտանել բաժանակից<sup>20</sup>:

Ը. ԱՆԵԿԵՆԵՑ, որպէս յայտ իսկ է, չորք ազգք են: Առաջին, այնոցիկ որ միաբանութեան կեանս կեցցեն, այն իսկ է վանական, ընդ կարգաւ եւ Աբասու զինուորեալ:

Ի. Իսկ երկրորդ ազգ, մենակեցացն մենացելոց. այս ինքն այնոցիկ որ յանապատի բնակեն. որ ոչ նորահասնորբն՝ ծայ իմն եռանդեամբ քաղաքաժարութեան, այլ յերկար փորձութեամբ վանական կարգաց ուսան ընդ սատանայի կուուել, եւ վարժեալք ի բաղձաց մխիթարութենէ անտի եւ բարւոյք թեքեալ, յեղբայրական ճակատուէ, յառանձին մարտս անապատին խրախուսեալ առանց այլոյ ուրուք բնփութեան, իւրեանց իսկ ձեռամբ լուկով կամ բաղկաւ ընդ կարիս մարմնոյ եւ խորհրդոց Աստուծոյ օգնականութեամբ բուական լինին կուուել:

Գ. Իսկ երրորդ ազգ վանականաց շարաշար յոյժ, Սարաբայիտեանցն է. որ ոչ կարգօք ինչ ընծայեալք եւ ոչ փորձիւ վարդապետացն որպէս զոսկի հալոցաց. այլ զօրէն իմն կապարի լուծեալ



եւ քայքայեալ, տակաւին զդաշինսն  
 ընդ աշխարհի անբակ պահելով ար-  
 գեանցն զործովք, յանդիմանին կը-  
 տրեալ հերօքն իւրեանց եթէ սուտ են  
 առ Աստուածն իւրեանց: Արկուք կամ  
 երիւք սմամբք, կամ արդարեւ անձամբ  
 իսկ առանձինն առանց հովուի, ոչ ի  
 տէրունի, այլ յիւրեանց փարախն մը-  
 տեալ փակեալ, նոցա փոխանակ ընդ օ-  
 բինաց ցանկութիւնք կամաց իւրեանց  
 են: Օ ի ինչ զոր ինքեանք կամին եւ ըն-  
 տրեն, զայն ասեն բարի. եւ զոր ոչն կա-  
 միցին, անարժան անպատշաճ համարին:

Դ. Չորրորդ ազգ վանականաց այ-  
 նոցիկ է, որ Մեղվայրազնացքն՝ կոչին .  
 որք զամենայն աւուրս կենաց իւրեանց  
 երից կամ շորից աւուրց ժամանակաւ  
 յայլ եւ այլ տեղիս ի խուղս օտարացն  
 հիւրանան. հանապաղ այսր անդր աստ-  
 անդեալ եւ ոչ ուրեք հանդարտեալք,  
 անձանց ցանկութեան եւ սրկորստու-  
 թեան ծառայութիւն հարկանեն, եւ  
 ամենեւին քան զՍարաբայիտեանսն  
 դժնդակագոյնք են:

Ե. Արդ քանզի յաղազս ամենեցուն  
 սոցա շարարարութեան զնացիցն լաւ է  
 բնաւ իսկ լուել, քան թէ ճառել ինչ .  
 նմին իրի զայնսոսիկ ի բաց եղեալ, աւն  
 առեալ առ առաքինի կարգս այնոցիկ  
 որ միարանութեան կեանս կեցցեն,

զմեր կանոնս յարդարիցեմք Տեառն  
օգնականութեամբ :

Գ Լ Ո Ի Խ Բ

ԹԷ՛ ՈՐՊԻՍԻ ԻՆՉ ՈՒՅ ՊԵՐՏԻՏԻ ՊԵՆԵՏ ՀԵՏԵՐՆ

ԻՒՆԵԼ,

Լ. ՊԵՐՏ եւ պատշաճ է Նքատուն, որ  
արժանին իցէ գլուխ լինել վանիցն, զա-  
նուն յորջորջանացն զոր կրէն, յամե-  
նայն ժամ առաջի աշաց ունել, եւ  
զմեծի անունն արդեամբք ընուլ, այ-  
նու զի զՎրիստոսի կերպարանսն յանձն  
իւր բարձեալ բերէ ի վանսն, նորին  
զեզեցիկ անուամբն կոչելով, ըստ ո-  
րում ասէ Նապքեալ. Ն.ռ.ք զհոգի  
որգեգրութեան, որով աղաղակեմք  
Նքբա, շայր<sup>21</sup> :

Բ. Նմին իրի իսկ չէ պարտ չէ պատ-  
շաճ շօր, ինչ մի ընդդէմ հրամանացն  
Տեառն, որ քաւ եւ մի լիցի, ուսու-  
ցանել կամ կարգել կամ թի: հրամայել  
ինչ : Այլ պատուիրանք նորա կամ  
վարդապետութիւն իբրեւ խմոր առ-  
տուածեղէն արդարութեանն ի միտս  
աշակերանացն սփռեսցին :

Գ. Յուչ լիցի նմա միշտ, զի եր-  
կոցունցն իսկ միանգամայն, իւրոյ վար-  
դապետութեանն ասեմ, եւ աշակեր-

տացն հնազանդութեան ճշգիւ քրն-  
նութիւնք լինելոց են յահաւոր ատենի  
Տեառն : Վիտասցէ, զի եթէ ինդիր ա-  
րարեալ Տանուտեառնն, գտանիցէ ինչ  
ինչ ի կարեւորացն պակաս եղեալ ի խա-  
շինան, պատճառք մնասուն առ հովիւ  
անդր բնթանան :

Դ. Սակայն եթէ հովուին ամե-  
նայն հաւատակաւ հնարս հնարեալ  
և մարդասէր զթովք զամենայն հա-  
մօրէն խնամս տարեալ, խստապա-  
րանոց ինչ և անհաւան զհօան գտա-  
նիցէ, ինքն յատենի Ղստուծոյ զանձն  
իւր արդարացոյց, և ասացէ այնու  
հետեւ Տեառն ընդ մարդարեին . Եւր-  
դարութիւնս քո ոչ ծածկեցի ի սրտի  
իմում, զճշմարտութիւն քո և զփրբ-  
կութիւն քո ասացի<sup>22</sup>, և նոքա ար-  
համարհեալ անդոսնեցին զես : Իսկ  
խաշանցն որ անհնազանդն եղեն խնա-  
մոցն իւրոց, ինքնին իսկ մահն ահագին  
եկեալ հասեալ, լինիցի այնու հետեւ  
նոցին պատուհաս :

Ե. Իսկ արդ յորժամ զօր դք զա-  
նուն առ, այնպիսոյն պարտ և պատ-  
շաճ է կրկին վարդապետութեամբ զա-  
շակերտեալսն հովուել . այս ինքն, զի  
զամենայն լաւութիւնսն և զգարկեշտ  
արդեամբք առաւել քան բանիւք ցու-  
ցանիցէ . որպէս զի աշակերտաց որ

ազնուազոյն միտս ունիցին, բանիւք լսկով զպատուիրանս Տեառն կարգիցէ դնիցէ առաջի. իսկ խստացն սրաիւք եւ պարզամտացն, գործովքն իւրովք զՆստուծոյ հրամանսն յանդիման կացուցանիցէ:

Չ. Իսկ զոր միանգամ ուսուցանելն կամիցի աշակերտացն թէ դժպատեհ են, զայն ինքնին իւրովի յիւր գործսն ցուցանիցէ թէ առնել չէ արժան. զի մի դուցէ որ այլոցն քարոզեաց, ինքն անպիտան դատնիցի<sup>23</sup>: Օ ի մի լինիցի ասել նմա Նստուած յորժամ ուրեք մեղիցէն, եթէ Կու բնդէր բնաւ պատմես զարդարութիւն իմ, կամ առնուս զուխաս իմ ի բերան քո: Օ ի դու ասեցեր զխրատ իմ, մերժեցեր եւ յեսս բնկեցեր զբանս բերանոյ իմոյ<sup>24</sup>: Եւ, Որ տեսանէիրդ զշիղ յական եղբոր քո, ի քում ական զգերանդ ոչ նշմարեցեր<sup>25</sup>:

Կ. Մի առնիցէ Հայրն ի վանսն խաիր բնդ մէջ եղբոր եւ եղբոր: Մի զսա քան զնա առաւել սիրել. բայց եթէ զայն, որ ի գործս բարեաց կամ ի հլուականութեան ազնուազոյն գտանիցի: Մի ոք եղբայր ազատ, քան զայն որ ի ծառայութենէ անտի դարձեալ եկեալն իցէ, նախամեծար համարիցի. բայց միայն եթէ այլ ինչ կա-

բեւոր բարուրք ի միջի կայցեն: Արպէս  
 զի թէ այնպէս ինչ լաւ թուիցի Զօրն  
 ըստ արդարութեան, զնոյն եւ յայլ ա-  
 մենայն կարգան պահեսցէ. ապա թէ  
 այլ ազգ ինչ, իւրաքանչիւր զիւր տե-  
 ղին կալցի: Օ՛ի թէպէտ ծառայ որ  
 իցէ թէպէտ ազատ, ամենեքեան մի  
 եմք ի Քրիստոս. եւ ընդ միով Տե-  
 բամբ զհասարակ ծառայութեան զի-  
 նուորութիւն յանձին ունիմք. Օ՛ի շէք  
 ակնառութիւն առաջի Ըստուծոյ<sup>26</sup>:  
 Եւ յայսմիկ միայն ի միմեանց զատա-  
 նիմք առաջի նորա, եթէ լաւագոյնք  
 քան զայլս ի գործս բարեաց եւ ի խո-  
 նարհութեան զտանիցիմք:

Բ. Եպա սէր նորա առ ամենեւին  
 հասարակ լինիցի. եւ զնոյն խրատ ա-  
 մենեցուն, ըստ իւրաքանչիւր արժա-  
 նեացն մատուցանիցէ: Վանզի յիւրում  
 վարդապետութեանն զառաքելական  
 կարգն պարտի պահել յամենայն ժամ,  
 զայն զի ասէ. Յանդիմանեա, սաստեա  
 եւ միսիթարեա<sup>27</sup>. այս ինքն է, զժա-  
 մանական ընդ ժամանակս կշռեալ, եւ  
 ընդ դառն եւ ընդ երկեւղ զողաքանսն  
 խառնեալ:

Թ. Օ՛խատութիւն վարդապետի եւ  
 զհօր քաղցրութիւն ի միասին միանդա-  
 մայն ցուցանիցէ. այս ինքն է, զի զան-  
 խրատսն եւ զանսաստս խատիւ յան-

գիմանեացէ. իսկ զՏլուսն եւ զգգոճա եւ զհամբերօղս մտիթարեացէ կամ ազաշեացէ, զի ի լաւ անդր յառաջագէմք զասանիցին. այլ շփութիցն եւ անարգուաց, խրատ ասմք սաստել եւ կըշտամբել:

Ժ. Մի անտես ասնիցէ զմեղս յոնցուցելոցն. այլ անդէն ի սկզբանն յորժամ սկսանիցին ի վեր երեւել, որչափ ձեռնհաս իցէ կարճնովին ի բաց հատանիցէ, յիշեալ զվիշտս շեղեայ քահանային ի Սեղովամ<sup>28</sup>:

Լ.Ժ. Եւ զցածուն ոգիսն եւ զմտավարժան յետ մի անգամ կամ երկիցս խրատելոյ, բանիւք յանդիմանեացէ. իսկ զթիւրեալս եւ զխիստս սրաիւք եւ զամբարտաւանան կամ զանհնագանդս զանից կամ թէ այլ ինչ մարմնոյ պատուհասիւք անդէն իսկ ի սկիզբն մեղաց խափանեացէ. զխտելով զասացեալն, թէ Աչ ուղղեացի բանիւք անմիան<sup>29</sup>: Աւ զարձեալ, թէ Դու հարկանես զորդին քո զաւաղանաւ, բայց զանձն նորա փրկես ի մահուանէ<sup>30</sup>:

Բ.Ժ. Պատշաճ է Եւբատուն յիշել միշտ զինչ էն եւ զինչ անուանեալ կոչի. եւ զխտել եթէ սրում բազում աւանդեցաւ, առաւել եւ պահանջեացի<sup>31</sup>: Աւ զարձեալ, եթէ սրախսի ծանունս եւ խիստս յանձն առեալ իցէ, զողխսն ուղ-

զէլ, եւ բազմացն բարոյից ի ծառայու-  
թեան կալ:

ԳՃ. Օ՛մն քաղցրենի բանիւք, ըզ-  
մեւս ոմն կշտամբելով, եւ զմեւս ոք  
հաւանեցուցանելով. եւ ըստ իւրաքան-  
շիւք կերպարանաց կամ մտավարժու-  
թեան այնպէս իմն զանձն պատշա-  
ճեալ յօրինեալ կարդիցէ, որպէս զի  
հօան որ նմա յանձն իցէ, ոչ միայն  
չմնասիցի, այլ եւ յաճել բարւոք հօ-  
տին ուրախ լինիցի:

ԳԺ. Ա՛ւ առաջին քան զամենայն. մի  
կերպարանելով, եւ կամ փոքր ինչ  
համարեալ զողոցն որ նմայն հաւատա-  
ցան զփրկութիւն, բնդ անցականսն  
եւ երկրաւորս եւ բնդ շմնալիս ա-  
ռաւել հոգ յանձին կալցի. այլ միշտ  
զմտաւ ածիցէ, զի սգւոց առաջնորդել  
յանձն առ, վասն որոց եւ համարս եւս  
տայցէ: Ա՛ւ զի մի զայն ինչ պատճա-  
ռիցի, որպէս եթէ դուզնաքեայ ինչ  
իրքն իցեն, յիշեցէ զգրեալն, թէ խրն-  
դրեցէք նախ զարքայութիւն Աստու-  
ծոյ եւ զարդարութիւն նորա, եւ այդ  
ամենայն յաւելցի ձեզ<sup>32</sup>: Ա՛ւ դարձեալ,  
Ոչ պակասէ ինչ երկիւղածաց նորա<sup>33</sup>:

ԵԺ. Գ՛իտասցէ, զի որոց զողիսն յե-  
րիւրել յանձն առեալ իցէ, այնպիսոյն  
պարտ է պատրաստել վասն նոցա հա-  
մարս տալոյ: Ա՛ւ ծանիցէ ստուգու-

Թեամբ զի ըստ Թուոյ եղբարցն որ ընդ իւրով հովուութեամբն կայցեն, ըստ նմին եւ համարս տալոց է Տեառն անշուշտ յաւուրն դատաստանի, վասն ամենեցուն նոցա ողւոցն եւ վասն իւրոյ անձինն. եւ այնպէս ցանդ ի հանդերձեալ հարցափորձէ հովուին վասն խաշանցն որ նմա հաւատացեալ իցեն, երկուցեալ, եւ յօտարոտի խճբժից զգուշացեալ, իւրացոյցն սկիցէ:

ՉԺ. Աւ յորժամ յորդորանաց բանիւք իւրովք այլոց ուղղութեանն Թեւադիր լինիցի, եւ ինքն յիւրոց շարեացն ուղղեացի այնու հետեւ:

#### Գ Լ Ո Ի Խ Գ

Գ.ԱՍՆ Ժ.ՈՂ.ՈՎ.Ս ԵՂ.ՐԵՐՑ Գ.ՈՒՄԵՐՆԵԱՍՈՑ

Ը. ՎՔԱՆԻՑՍ անգամ Թէ գէպք լինիցին նշանաւոր ինչ իրս առնելոյ ի վանսն, ի մի վայր դումարեացէ Վքասն զհամօրէն ժողովն. եւ ասացէ ինքն զօրմէ բանք իցեն: Աւ լուեալ ըզխորհուրդ եղբարցն, կշռեացէ յանձն իւր. եւ զոր ինչ ինքն առաւել օգուան դատեացի, առնիցէ:

Թ. Աւ յայն սակս դուլ եւ պատուէր տուաք զամենեւին ի խորհուրդն կոչել, զի բազում անգամ զայն որ լան է, կրսերոյն յայանէ Տէր:



Գ. Այսպէս տայցեն խորհուրդ եղբարքն, ամենայն ընտելական խոնարհութեամբ. որպէս զի մի ժտեսցեն յամառել պնդել յայն ինչ որ նոցայն հաճոյ թուիցի, այլ առաւել զկամաց շօրքն կախեալ կայցեն. զի զոր նայն շայն կանազոյն դատեսցի, ամենեքին այնմ անսայցեն:

Դ. Այլ զոր օրինակ արժան է աշակերտաց վարդապետին հնազանդ լինել, այսպէս եւ նմա խնամով եւ իբրաւամբ զբնան կարգել:

Ե. Այլ յամենայնի զկանոնն կաշցին ամենեքին իւրեանց վարդապետ, եւ մի խառն ի խուռն յանդգնեալ խոտորեսցին անտի ուրեք:

Զ. Մի ոք ի վանսն զհետ կամաց սրտի իւրոյ գնայցէ. նոյնպէս եւ մի ժրտեսցէ ոք ի վանսն կամ արտաքոյ, շարաշար ընդ իւրում Նքատուն վիճել:

Է. Իսկ եթէ յանդգնեսցի ոք յայնպիսիս, ընդ կանոնական խրատուն անկանիցի:

Ը. Սակայն եւ ինքն իսկ Նքատուն երկիւղին Նստուծոյ եւ կանոնացն պահպանութեամբ զամենայն վճարեսցէ. գիտացեալ առանց երկմտութեան, եթէ ընդ ամենայն դատաստանաց իւրոց արդար դատաւորին Նստուծոյ համարունի տալ:

25-966-52

4057

1355

ԹՎ. Իսկ եթէ մանր մանր ինչ իբք ի միջի կայցեն ի պէտս վանայն, ընդ ծերսն միայն լինիցի խորհրդակից. որ պէս եւ զրեալ է, թէ Առանց խորհրդեան մի ինչ առնիցես, եւ մի յառնելն զզջանար<sup>34</sup> :

Գ Լ Ո Ի Խ Գ

ԹԼ: ԲՅՆԶ ԸՇՆՔ ԻՑՆՆ ՈՐ ԳՈՐԾԱԿԻՑՆ

ԼԻՆԻՑԻՆ ՄՆՋ Ի ԸՆԲԻՍ

Ը. ԱՌԱՋԻՆ. սիրել զՏէր Աստուած յամենայն սրտէ, յամենայն անձնէ եւ յամենայն զօրութենէ<sup>35</sup> :

Ի. Արկրորդ. սիրել զլնկերն իբրեւ զանձն<sup>36</sup> : Արրորդ. մի սպանանել<sup>37</sup>, մի շնալ<sup>37</sup>, մի զողանալ, մի ցանկալ<sup>38</sup>, մի սուտ վկայել<sup>39</sup>, զամենեւեան պատուել<sup>40</sup>, եւ, զոր դուն ատեաս ումէք մի առնիցես<sup>41</sup> :

Գ. Օանձն ուրանալ<sup>42</sup>, զի զհետ զնայցես Վրիստոսի, ճնշել զմարմին<sup>43</sup>, մի ի փափկութիւնս հատանել<sup>44</sup>, սիրել զպահէլն ի կերակրոց<sup>45</sup> :

Դ. Սխիթար լինել աղքատաց<sup>46</sup>, զգեցուցանել զմերկն<sup>47</sup>, ատանել զհիւանդն<sup>48</sup>, թաղել զմեռեալն<sup>49</sup>, օգնական լինել ի նեղութեան<sup>50</sup>, մսխիթարել զկարճամիտս<sup>51</sup> :

Ե. Ընարատ պահէլ զանձն յաշ-  
խարհի գործոց<sup>52</sup> : Մի ինչ նախամե-  
ծար քան զսէրն Քրիստոսի համարել<sup>53</sup>,  
բարկութեան մի անտալ<sup>54</sup>, մի տալ  
ժամ սրամտութեան<sup>55</sup> : Նենդութիւն  
ի սրտի մի ունել<sup>56</sup>, մի խօսել ըզ-  
խաղաղութիւն ստութեամբ<sup>57</sup>, զսէր  
մի թողուլ<sup>58</sup> : Մի երգնուլ, զի մի եւ  
սուտ երգնուցուս<sup>59</sup>, զճշմարտութիւ-  
նն այնպէս խօսել բերանով, որպէս ինչ  
եւ կայցէ ի սրտի<sup>60</sup> : Մի շարի շար հա-  
տուցանել<sup>61</sup>, մի զրկել, այլ համբե-  
րութեամբ տանել զրկանաց<sup>62</sup>, սիրել  
զթշնամիս<sup>63</sup>, մի անիծանել զանիծի-  
շրս, այլ առաւել օրհնել<sup>64</sup> : Համբերել  
հալածանաց վասն արդարութեան<sup>65</sup> :

Զ. Մի ամբարհաւածել, մի գինե-  
սէրս<sup>66</sup>, մի շատակերս լինել, մի քրն-  
էածս, մի ծոյլս, մի տրանջօղս<sup>67</sup>, մի  
բամբասօղս լինել<sup>68</sup>, յասուած զնել  
զժոյս<sup>69</sup> :

Է. Օքարի, զոր յանձին ինչ տեսա-  
նէ որք, ճեառն տայցէ եւ մի անձին<sup>70</sup>,  
իսկ զչարն զխտացէ յանձնէ իւրմէ լի-  
եալ միշտ, եւ անձին համարիցի<sup>71</sup> :

Ը. Երկնչել յօրէ գատաստանին<sup>72</sup>,  
ի գեհննէն զարհուրել<sup>73</sup>, ամենայն հո-  
գեւոր ցանկութեամբ փափաքել կե-  
նացն յաւիտենից<sup>74</sup> :

Թ. Օմահ զօր հանապաղ առաջի

աչաց նկարեալ ունել<sup>75</sup>. յամենայն ժամ  
 գործոց կենաց իւրոց պահապան լինել<sup>76</sup>.  
 հաւաստեալ գիտել, զի ամենայն ուրեք  
 աչք Տեառն գիտեն յանձն իւր<sup>77</sup> :

Ժ. Օխորհուրդս շարս յարուցեալս  
 ի սրտի, անդէն իսկ իսկզբանն փշրել  
 քնդ ոտամբ Վրիստոսի<sup>78</sup>, եւ յայանել  
 հոգեւոր հօրն :

Ե.ժ. Ի խառնխօսութենէ եւ ի բա-  
 նից շարաց պահել զլեզու<sup>79</sup>. մի սիրել  
 զչառ խօսել<sup>80</sup>. ի խեղկատակութենէ  
 եւ ի սնտախօսից մերժել<sup>81</sup>. զյաճախ  
 ծաղրն եւ զքրքջել մի սիրել<sup>82</sup> :

Բ.ժ. Բնութեցուածոց սրբոց կամա-  
 կար ունին դնել<sup>83</sup>. աղօթից սաէպ կալ<sup>84</sup>.  
 զմեզս իւր զառաջինս հանապազօր ար-  
 աասուօք եւ հեծութեամբ խոստովան  
 լինել յաղօթս առաջի Տեառն<sup>85</sup>, եւ  
 միանգամայն ուղղել ի նոցունց. բղ-  
 ցանկութիւն մարմնոց մի կատարել<sup>86</sup>.  
 զկամս ատել :

Գ.ժ. Հրամանաց Աբստուն յամենայ-  
 նի հպատակ կալ, թէ եւ ինքն այլազգ  
 ինչ, որ քաւ լիցի, գործիցէ. հրամա-  
 նաց Տեառն անսացեալ, այնձ, թէ  
 Զամենայն ինչ որ ասիցեն ձեզ արաս-  
 ջիք, բայց ըստ գործոց նոցա մի առ-  
 նէք<sup>87</sup> : Մի յառաջ քան զլինելն սուրբ,  
 զանուանելն կամիցիս. լինիցիս, զի  
 ճշմարտութեամբ կոչեսցիս<sup>88</sup> :

Վ.Ճ. • Օգտատուիրանս Տեառն ար-  
դեամբք ընուլ հանազազ, սիրել զզգաս-  
տութիւն. զոք մի առեւ<sup>99</sup>. զհեռ եւ  
զնախանձ մի ունել<sup>90</sup>. մի բանակախ  
լինել<sup>91</sup>. խորշել յամբարտաւանութե-  
նէ<sup>92</sup>. յերիցազունայն ակն ածել<sup>93</sup>.  
զկրտսերան սիրել<sup>94</sup>. վասն թշնամեա-  
ցըն աղօթս առնել առ Քրիստոսի սի-  
րոյն<sup>95</sup>: Ընդ շմարանեալսն նախ քան  
զմտանել արեղական զխաղաղութիւն  
առնել<sup>96</sup>. յողորմութեանց Տեառն եր-  
բեք մի հատանել զյոյս<sup>97</sup>:

Ն.Ճ. • Ընդ այսոքիկ են հոգեւոր ա-  
րուեստին գործիք, զորս թէ զտիւ եւ  
զգիշեր անդադար ի կիր առնուցումք  
եւ յօր դատաստանին պահեմք, զվար-  
ձըս փոխարինին ընդունիցիմք ի Տեառ-  
նէ, զայն զոր ինքն խոստացաւ. Զոր  
ակն ոչ ետես եւ ունկն ոչ լուաւ եւ ի  
սիրտ մարդոյ ոչ անկաւ զոր պատրաս-  
տեաց Նստուած սիրելեաց իւրոց<sup>98</sup>: Իսկ  
արուեստանոցքն ուր զայս ամենայն հա-  
ւաստեաւ գործիցեմք, հանգրուանք  
վանայն են եւ կալն ի ժողովս եղբարց:

Ը. ԱՌԱՋԻՆ աստիճանն խոնարհու-  
թեան հնազանդել փութով: Այս վայ-  
ել է այնպիկ, որ քան զԲրիտանոս շը-  
համարին ինչ մեծ վասն սրբոյ ծառայու-  
թեանն զոր յանձն առեալ իցեն. կամ  
վասն երկիւղի դեհենին կամ վասն փա-  
ռաց կենացն յախտենից: Այնպիսիք,  
թէ հրամայիցի ինչ նոցա ի մեծ է անտի,  
որպէս թէ յաստուածակոյս կողմանէ  
անտի հրամայեալ, դանդաղել բնառա  
ի կատարումն ոչ գիտեն: Օչ այսպիսեաց  
ասաց Տէր. Ի լուր ակրնջաց լուառ ինձ<sup>99</sup>.  
Եւ ցվարդապետան ասէ դարձեալ, Ար  
ձեզ լսէ, ինձ լսէ<sup>100</sup>:

Ի. Արդ այսպիսիք թողեալ վաղ-  
վաղակի զորս իւրքն են, եւ զիւրեանց  
կամս բքեալք, անդէն մինչ դեռ ի ձեռս  
իսկ էին գործքն անկատար թողին, եւ  
հնազանդութեան կազմ եւ պատրաս-  
տական ստիւք զբարբառոյ հրամանա-  
տուին զհետ երթան գործովք. եւ զրե-  
թէ ի միում վայրիկեան ժամանակի հրա-  
մայեալ բան վարդապետին, եւ կատա-  
րեալ գործ աշակերտին, զուարթու-  
թեամբ երկիւղիւ Տեառն երկոքեանն  
միանդամայն առ հասարակ արագ արագ

ի գլուխ ելեալ վճարին յայնցանէ, որոց  
ի կեանսն յաւիտենականս մտանելոյ  
ինամ ի սրտի կայցէ :

Գ. Յայն սակս զանձուկ ճանապար-  
հքն ընթանան, զորմէ Տէրն ասաց, թէ  
Նեղ է ճանապարհն որ տանի ի կեա-  
նքս<sup>101</sup>, զի մի ըստ իւրեանց հեշտի կե-  
ցեալ իւրեանց տենչանայն եւ ցանկու-  
թեանց անսայցեն, այլ օտարին դա-  
տաստանաւն եւ հրամանաւ զընթացս  
ընթանայցեն. նմին իրի իսկ ի մենաս-  
տանս հանդարտեն եւ ցանկան ընդ Ա-  
բասուն իշխանութեամբ կալ :

Դ. Սորա են առանց երկմտութեան  
որ զհետ երթան Տեառն բանի, այնմ  
զի ասէն, Աջ եկի զի զկամս իմ արա-  
բից, այլ զկամս այնորիկ որ առաքեա-  
ցրն զիս<sup>102</sup> :

Ե. Սակայն եւ այս հնազանդութիւն  
յայնժամ Աօտուծոյ ընդունելի է եւ  
մարդկան հեշտական, յորժամ ոչ ծոյ-  
լըս ինչ, ոչ յամբ, ոչ յուլութեամբ, եւ  
կամ բնաւ արանջելով իսկ եւ բանընդ-  
դէմ լինելով զհրամայեալն զք վճարի-  
ցէ. քանզի հլութիւն որ աւագայն հար-  
կանի, առ Աօտուած գնայ. քանզի ին-  
քնին իսկ ասաց, թէ Ար ձեզ լսէ, ինձ  
լսէ :

Զ. Աս այսու, եւ զուարթագին սրբ-  
տիւ արժան է աշակերտայն հնազան-

դել. Քանզի զտուրս զուարթառաստ սիրէ Տէր<sup>103</sup> : Աթէ դժկամակ մազք ոք հնազանդեցի, եւ ոչ լեզուան միայն, այլ եւ սրտին արանջեցէ, լնուլ լնուցու զհրամանն, այլ ընդունելի Տեառն ոչ լինի, որ ի սիրտ անդր նայի այնր որ արանջէն :

Լ. Սի ակն կայցի այնպիսին առնուլ ինչ շնորհս ընդ այնր գործոյ. այլ մանաւանդ եթէ ոչ ըստ արժանին ապաշաւիցէ, զպատիժ պատուհասի արանջու զայն ընկայցի :

### Գ Լ Ո Ի Խ Զ

ՅԵՂԵՂՍ ԼՈՌԻԹԵՆՆ

Լ. ԱՐԱՍՅՈՒՔ զոր ասէ մարդարէն. Լսացի, թէ պահեցից զճանապարհս իմ, զի մի մեղայց լեզուաւ իմով : Ադի պահապան բերանոյ իմոյ : Առաւ եղէ, եւ խոնարհեցայ եւ լուցի ի բարութենէ<sup>104</sup> :

Բ. Յայսմ վայրի զայն իմն կամի ակնարկել մարդարէն. զի եթէ արժան իցէ լուել էրբէք եւ ի բանից բարեաց ի պատճառս լութեան, քանի՞ն առաւել ի բանից շարաց լուել պարտ իցէ յաղագս մեղացն պատուհասի :

Գ. Ա ասն այսորիկ դուն ուրեք համարձակ իցէ կատարելոց աշակերտացն



խօսել բանս բարիս եւ սուրբս եւ որ  
ի շինած իցեն, վասն շքոյ լուծեան.  
քանզի գրեալ է, Ի շատխօսութենէ  
ոչ ապրեսցիս ի մեղաց<sup>105</sup>. եւ այլուր.  
Սա՜հ եւ կեանք ի ձեռս լեզուի<sup>106</sup> :

Դ. Վանզի խօսելն եւ ուսուցանել,  
վարդապետաց արժան է. լուին եւ լը-  
սել, աշակերտաց վայելուչ :

Ե. Ապա եթէ պէտք ինչ ուրեք լի-  
նիցին խնդրելոյ իրս ինչ յԱռաջնորդէ  
անտի, ամենայն խոնարհութեամբ եւ  
ցածութեամբ մեծարանօք պարտէ խրն-  
դրել. զի մի այնպէս ինչ թուիցի, թէ  
աւելի քան զոր պատշաճն եւ արժան  
իցէ խօսել, խօսեսցի :

Զ. Այլ խեղկատակութիւնք կամ  
բնդվայրախօսութիւնք եւ ծաղրածու  
բանք բնաւ իսկ յամենայն տեղեաց քաջ  
ի բաց մեկուսի կայցեն. առ այսպիսիս  
եւ բերան բանալ աշակերտաց շտամք  
թոյլ :

## Գ Լ ՈՒ Խ Է

ՅԵՂԵՂՍ ԻՌՆԵՐՎՈՒԹԵՆՆ

Ը. ԱՂԱԿԵՆ առ մեզ, եղբարք,  
ասաուածեղէն Գիրք եւ ասեն. Ամենայն  
որ բարձրացուցանէ զանձն, խոնար-  
հեացի. եւ որ խոնարհեցուցանէ զանձն,  
բարձրացի<sup>107</sup> : Արդ զայս ասելով,

զայն իմն կամի յայտ առնել, թէ ամենայն բարձրութիւն ազգ ինչ է ամբարտաւանութեան :

Բ. Յորմէ զի խորշեր մարդարէն, այնու իսկ յայտ առնէ, զի ասէ. Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ, եւ ոչ զբօսան աչք իմ : Ոչ գնացի ես ընդ մեծամեծս, եւ ոչ ընդ այնոսիկ, ոչք զքանչելի էին քան զես : Այլ զինչ. Բայց թէ խոնարհեցայ իբրեւ մանուկ հատուցեալ ի բռտենէ մօր իւրոյ : Այլ հպարտացուցի՞ արդեւք զանձն իմ. այսպէս եղիցի հատուցումն անձին իմոյ<sup>108</sup> :

Գ. Աւտօի եղբարք, եթէ ի զլուխ բարձու խոնարհութեանն կամիցիմք հասանել, եւ ի բարձրարեւրձ բարձունսն երկնաւորս յոր խոնարհութեամբ մօտաւոր կենացս մարթի ժամանել, արագ արագ վերանալ ելանել, պարտ եւ պատշաճ է մեզ կանգնել զսանդուղսն որ Յակոբայն<sup>109</sup> ցուցաւ յանուրջսն, ընդ որս էջք եւ ելք հրեշտակաց երեւէին նմա. որպէս զի զործովք մերովք ընդ այն ելանիցեմք :

Դ. Այլ արդարեւ ոչ այլ ինչ իջանելն այն եւ ելանելն յայտ առնեն, բայց եթէ զիջանելն բարձրութեամբ, եւ զելանելն խոնարհութեամբ :

Ե. Սանդուղք կանգնեալք մեր կեանքըս իսկ են յաշխարհի, յորում սրախ

խոնարհեալ ի վեր յերկինս ի Տեառնէ  
ամբառնամք: Կսկ կողմանս սանդղոցս  
այսոցիկ զմարմին եւ զհոգիս մեր ա-  
սեմք, եւ ի կողմանսն աստիճանս խո-  
նարհութեան կամ խրատու պէտպէսս  
կազմեաց եզ աստուածեղէն կոչումն,  
զի ընդ այնս ելանիցեմք:

Յ. Արդ առաջին աստիճան խոնար-  
հութեան այն իսկ է, յորժամ զերկեզ  
Տեառն առաջի աչաց որ ունիցի հանա-  
պաղ, եւ ի մտանալոյ զնա բացէ ի բաց  
փախիցէ: Յորժամ միշտ յուշի ունիցի  
զամենայն զոր ինչ պատուէր եւս Աս-  
տուած, եւ թէ որ զԱստուածն անար-  
գեն ի գեհենն անկանիցին ընդ մե-  
զայն. եւ զյաւիտենից կեանսն որ եր-  
կիւղածաց Տեառն պատրաստեալ իցէ,  
ի միտսն ցանկ յեղեղեցէ:

Կ. Յամենայն ժամ ի մեզաց եւ ի  
չարեաց անձնապահ լինիցի, որ մտօքն  
եւ լեզուաւ եւ աչօք եւ ձեռօք եւ ու-  
տիւք եւ կամ զիւր կամս կատարելա-  
վըն գործիցին. առ այսօրիւք եւ զցան-  
կութիւն մարմնոյ փութացի ի բաց  
յապաւել:

Ը. Օչոյս ինչ իմաի ունիցի, զի յա-  
մենայն ժամ յերկնից յանձն իւր հայի  
Աստուած հանապաղ. եւ զի գործք իւր  
մերկապարանոց են առաջի աստուա-  
ծութեանն, եւ ի հրեշտակաց անախ

պատմին յամենայն ժամ: Օչսոյն մեզ  
 եւ մարդարէն յանդիման կացուցանէ,  
 յորժամ ցուցանիցէն, թէ յամենայն  
 ժամ մօտ է Ղստուած խորհրդոց մերոց  
 յասելն, Որքննէ զսիրտս եւ զերիկամու-  
 նրս Ղստուած<sup>110</sup>: Աւ միւսանդամ, թէ  
 Տէր ճանաչէ զխորհուրդ մարդկան, զի  
 են ընդունայն<sup>111</sup>: Աւ նոյնպէս ասէ. Ի  
 միտ առեր զխորհուրդս իմ ի հեռաս-  
 տանէ<sup>112</sup>: Աւ, խորհուրդք մարդկան  
 խոստովան առնին առ նա<sup>113</sup>:

Թ. Աւ զի խնամով զգուշանայցէ  
 կամակոր խորհրդոց, ասացէ ի սրտի  
 իւրում միշտ եւ հանապաղ. Յայնժամ  
 եղէց եւ ես անբիծ ընդ նմա, եթէ  
 զգուշացայց յանօրէնութենէ իմմէ<sup>114</sup>:

Ժ. Իսկ զսեպհական կամս մեր առ-  
 նել, այսպէս շառնուն մեզ յանձն աս-  
 տուած եղէն Վիբք, յորժամ ասիցեն,  
 թէ Աւ ի կամոց քոց հրատարեսջիր<sup>115</sup>:  
 Աւ դարձեալ աղաչեմք զՂստուած յա-  
 զօթս, զի եղիցին կամք նորա ի մեզ<sup>116</sup>:

Աժ. Աւ յիրաւի եւ յարժանի իսկ  
 խրատիմք մի առնել զկամս մեր, եթէ  
 կամիմք զերձանել յայնմանէ զոր ասեն  
 Վիբք, եթէ Ան ճանապարհք որ թուին  
 մարդոց թէ ուղիղ իցեն, եւ կատարած  
 նոցա հայի յատակս դժոխոց<sup>117</sup>: Աւ  
 դարձեալ եթէ եւ յայնմանէ եւս կամի-  
 ցիմք խորշել, որ չփութիցն ասացեալ

է, թէ Մ. պահանեցան եւ անպիտանացան  
ի կամս իւրեանց<sup>118</sup> :

ԲԺ. Իսկ ի ցանկութիւնս մարմնոյ,  
այսպէս գիտասցուք զի առաջի Մ. ստու-  
ծոյ կամք յամենայն ժամ. որպէս եւ  
մարգարէն իսկ ասէ, եթէ Մ. առջի քս է  
ամենայն ցանկութիւն իմ<sup>119</sup> : Արդ յայն  
սակս ի շար ցանկութենէ անտի պարտ  
է մեզ խորշել, զի ի վայելչութեան անդ  
քաղցրութեանն թաղուցեալ զարա-  
նեալ կայ մահ : Ա անն այնորիկ պա-  
տուիրեն Գիրք եւ ասեն, Զհետ ցանկու-  
թեանց քոց, ասէ, մի գնար<sup>120</sup> :

ԳԺ. Արդ եթէ աչք Տեառն գիտեն  
գրարիս եւ զչարս, եւ հայի միշտ յեր-  
կնից յորդիս մարդկան տեսանել թէ  
գուցէ ոք, որ առնուցու ի միտ կամ  
խնդրիցէ զՄ. ստուած. եթէ մեր հանա-  
պազորդ հրեշտակքն զցայգ եւ զցերեկ  
Տեառն Վարդին մերոյ եւ ամենեցուն  
հասաչին Մ. ստուծոյ պատմն զգործս  
մեր. ապա եւ մեզ, եղբարք, պարտ եւ  
պատշաճ է զգոյշ լինել յամենայն ժամ,  
որպէս եւ մարգարէն յիւրում սաղմոսին  
ասէ. զի մի լիցի ժամ, յորում տեսանի-  
ցէ զմեզ Մ. ստուած խտորեալս ի շարիս  
եւ անպիտանացեալս<sup>121</sup> : Աւ զի գթած  
է, եւ անսայ տեւէ դառնալոյ մերոյ ի  
լուութիւն զգաստութեան, խնայեալ  
եւ զնեղացեալ ի մեզ յոյժմու ժամա-

նակիս, մի լիցի ասել ի հանդերձեայն,  
եթէ Զայս ամենայն արարեր, եւ ես  
լուցի քեզ<sup>122</sup> :

ԴԺ. ԱՐԿԱՐԿԻ աստիճան խոնարհու-  
թեան այն է, յորժամ զանձին ոք կա-  
մբս ոչ սիրիցէ, եւ զհաճոյսն իւր կատա-  
րել ոչ քաղցրացի նմա: Այլ տէրու-  
նական բարբառոյն արդեամբք նմանօղ  
լինիցի, այնմ թէ Աչ եկի զի զկամս իմ  
արարից, այլ զկամս այնորիկ որ առա-  
քեացն զիս<sup>123</sup> : Վարձեալ ասէ ուրեք  
Վիր.՝ Կամք կրեն տանջանս, եւ հարկ  
ճնանի պսակս :

ԵԺ. ԱՐԿԱՐԿԻ աստիճան խոնարհու-  
թեան այն իսկ է, զի վասն Աստուծոյ  
սիրոյն ոք հպատակ կայցէ Աւագին ա-  
մենայն հլութեամբ. նմանօղ Տեառն  
լինելով, զորմէ Առաքեալն վկայէ, թէ  
Եղև հնազանդ մահու չափ<sup>124</sup> :

ԶԺ. ՉԱՐԿԱՐԿԻ աստիճան խոնարհու-  
թեան է, եթէ անդէն իսկ ի հպատա-  
կութեանն, խստաց իմն եւ ձախող ինչ  
իրաց կամ թէ բնաւ զբապարտ իսկ  
զըկանաց խաղաղական ողւով ոք ժուժ-  
կալեալ համբերիցէ: Այլ յանձին կա-  
լեալ երկայնմատութեամբ, մի պարտա-  
սեալ ի կոր կորճանեացի. զի ասէ Վիր,  
թէ Ար համբերէն իսպառ, նա կեցցէ<sup>125</sup> :  
Եւ, թէ Զօրացի սիրտ քս, եւ համ-  
բեր Տեառն<sup>126</sup> :

Ե՛ւ զայն իմն կամեցեալ յայտ  
առնել, եթէ հաւատարիմ ծառայի  
Տեառն, բնաւի իսկ թէ և հակառակ  
ինչ իբր իցեն, պարտ է համբերել, ա-  
ռեալ զանձամբ զերեսս համբերողայն,  
ասէ. Վասն թո մեռանիմք զօր հանա-  
պաղ, համարեցաք որպէս զոչխար ի  
սպանումն <sup>127</sup> :

Ե՛ւ Վսյնպիտիք ի յոյս աստուածե-  
ղէն վարձուցն խրախուսեալք, բնոյ ա-  
մենայն անցս ինոյ ութեամբ անցանեն և  
ասեն. Յայսմ ամենայնի առաւել յաղ-  
թեմք նովաւ որ սիրեացն զմեզ <sup>128</sup> : Եւ  
զարձեալ, որպէս ասէ ուրեք Ղիիր. Փոր-  
ձեցեր, ասէ, զմեզ, Նստուած, և քրն-  
նեցեր հուրք, որպէս և քննի արժամք :  
Իջուցեր զմեզ յորոգայթ, և գեր նեղու-  
թիւն ի թիկունս մեր <sup>129</sup> :

Թ՛ւ զի զայն իմն ցուցանիցէ և  
թէ բնոյ զլխաւ որաւ արժան է մեզ լի-  
նել, ամէ թափէ վաղվաղակի և ասէ.  
Ընցուցեր, ասէ, զմարդիկ ի վերայ  
զլխոց մերոց <sup>130</sup> :

Ի. Վսլ առ այսու և զտէրունի հրա-  
մանն ընուցուն յորժամ ի հակառակ-  
որն և ի զրկանս ժռժկայիցեն. գորոց  
թէ զճնօսն որ հարկանիցէ, և զմեռան  
զարձուցանեն. և որ հանիցէ որ զշա-  
պիկան, թողուն և զբաճկանն. և որ  
ասարապարհակ վարիցէ զնստա մզոն մի,

երթան եւ երկուս <sup>131</sup> : Միդ առաքելոյն  
 Պաւղոսի սուտ եղբարցն տանին, հա-  
 լածանաց համբերեն . եւ զորս անիծա-  
 նենն, օրհնեն <sup>132</sup> :

Ի՛Ղ . Ա՛ՆԿԵՐՈՐԿ աստիճան խոնար-  
 հութեան է, թէ զամենայն շարխոր-  
 հուրդս դք որ ի միտան գայցեն, կամ  
 զոր գաղտ ինչ սւրուք դործեալ իցէ,  
 խոնարհութեամբ խոստովանեալ ի շօ-  
 րէն ինչ ոչ թագուցանիցէ :

Ի՛Ն . Ա՛յն սորին եւ աստուածեղէն  
 Մատեանքն թելադիր լինին մեզ, յոր-  
 ժամ ասիցեն, թէ Յայանեա առաջի  
 Տեառն զճանապարհս քո, եւ յուսի  
 նա <sup>133</sup> : Այւ դարձեալ ասէ . խոստովան  
 եղերուք Տեառն, զի քաղցր է, զի յա-  
 շխտեան է սղորմութիւն նորա <sup>134</sup> : Այւ  
 նոյն դարձեալ . օ՛մեզս իմ, ասէ, ցու-  
 ցից քեզ . եւ զանօրէնութիւնս իմ ոչ  
 ծածկեցից ի քէն : Ասացի, թէ պատ-  
 մեցից ինձէն զմեզս իմ, եւ դու թող-  
 ցես զամենայն ամպարշտութիւնս մե-  
 զաց իմոց <sup>135</sup> :

Ի՛Վ . Ա՛յն սորին աստիճան խոնարհու-  
 թեան այն է, թէ ընդ ամենայն ար-  
 համարհանս եւ ընդ վայրենիեցիկն լի-  
 նել հաճեալ եւ հաւանեալ գտցի վա-  
 նականն . եւ առ ամենայն որ նմայն  
 հրամայիցի, որպէս ծառայ անպիտան  
 եւ անարժան զանձն համարեցի, եւ ա-



սիցէ ընդ մարդարէին . Աս արհամարհեալ եղէ եւ ոչ գիտացի . եւ որպէս զանասուն համարեցայ առաջի քո , եւ ես յամենայն ժամ ընդ քեզ եմ<sup>136</sup> :

ԻԴ . ԱԻԹՆԵՐՈՐԿ աստիճան այն է , զի քան զամենեւին ի վայր ոք եւ անարդ զանձն համարեցի . ոչ լեզուաւ միայն բարբառելով , այլ եւ անդէն իսկ ի ներքս ի սրաի իւրում ճշմարտութեամբ հաւատալով : Աւ ասիցէ խոնարհութեամբ ընդ մարդարէին . Այլ ես որդն եմ , եւ ոչ մարդ . նախատինք մարդկան եւ արհամարհանք ժողովորդոց<sup>137</sup> : Ի բարձրութենէ խոնարհեցայ եւ ապշեցայ<sup>138</sup> . եւ , ՚արի է ինձ , զի խոնարհ արարեր զիս . որպէս ուսացց զիրաւունս արդարութեան քոց<sup>139</sup> :

ԻԵ . ՈՒԹՆԵՐՈՐԿ աստիճան այն է , յորժամ զայն միայն առնիցէ արեղայն , զոր հասարակաց կանոնք վանացն կամ աւաղացն օրինակք առնել յորդորիցեն :

ԻԶ . ԻՆՆԵՐՈՐԿ աստիճան այն է , զի զլեզուն ոք ի խօսելոյ խնայիցէ , եւ լուս եւեթ կայցէ . մինչ չեւ հարցեալ իցէ , մի ինչ խօսեցի . որպէս եւ ցուցանէ իսկ Պիլ . Զի ի շատխօսութենէ , ասէ , ոչ ապրեացիս ի մեղաց<sup>140</sup> . եւ զի , Վարդոյ լեզուանոյ մի յաջողեցի ի վերայ երկրի<sup>141</sup> :

ԻԿ . ՏԵՍՆԵՐՈՐԿ աստիճան խոնար-

Հուլիսեան այն է, զի մի արագ ոք եւ վայելի ի ծաղը իցէ, զի ասէ Պիր . Անմիան ի ծիծաղէն իւրում բարձրացուցանէ զձայն իւր <sup>142</sup> :

ԻՐ . ՍՆՏԵՍԵՆԵՐՐԵՒ այն իսկ է, յորժամ մեղմով ոք եւ առանց ծաղու ցածուլիսեամբ եւ զգոնուլիսեամբ խօսիցի . կամ զոր խօսիցին, սակաւ իցէ եւ կըշուով, եւ մի բարձրաձայն աղաղակեսցէ, որպէս գրեալ է՝ . Իմաստունն ի սակաւ բանից իւրոց ճանաչի <sup>143</sup> :

ԻԹ . ԱՐԿՈՏԵՍԵՆԵՐՐԵՒ այն է, յորժամ ոչ սրտին միայն, այլ եւ մարմնովն իսկ խոնարհ զանձն ակտողացն ցուցանիցէ յամենայնիւ Աստինքն է . ի դորձքս եւ յեկեղեցւոջ, ի վանս, ի պարտիցի, ի ճանապարհի եւ յազարակի . եթէ նստիցի, եւ եթէ շրջիցի, եւ եթէ յտան կայցէ, միշտ ի խոնարհ ունիցի զգլուխ իւր եւ աչօք զերկիր նըշմարիցէ : Յամենայն ժամ պատժապարտ զանձն վասն մեղացն Համարեսցի : Այնպիսի ինչ ի մտի դնիցէ որպէս թէ առաջի ահեղ ատենին Աստուծոյ Հասեալ կայցէ . եւ ասիցէ միշտ ցանձն իւր ի սրտի իւրում զայն, զոր մաքսաւորն ասէր յաւետարանին զաչսն ի խոնարհ ունելով . Տէր, ասէ, շեմ արժանի մեղաւորս, Համբառնալ զաչս իմ յերկինքս <sup>144</sup> . եւ դարձեալ ընդ մարգարէին,

Թէ Տառապեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ յոյժ<sup>145</sup> :

Լ. Արդ իբրեւ ընդ ամենայն աստիճանս այստօիկ խոնարհութեամբ ելանիցէ վանականն, տակաւ ի կատարեալ սէրն հասանիցէ, յայն սր ի բաց մերժէ զերկեւեղ<sup>146</sup>, որով եւ զամենայն, զոր յառաջն չկարէր առնել առանց տազնապելոյ, անջան վաստակովք այնու հետեւ իբրեւ սովորութեամբ բնութեամբ դարձել սկսանիցի. ոչ եթէ զհենին ինչ երկիւղիւ, այլ զթովն Քրիստոսի եւ բարեզք սովորութեամբն, եւ առաքինութեանցն վայելութեամբ. զորս յիւր մշակսն արժանի արասցէ Տէր ցուցանել սրբեալ հոգւովն սրբով ի շարեացն եւ ի մեղաց :

### Գ Լ Ո Ի Խ Ը

ՅԵՂԱՅԱՍ ԸՍՏՈՒՆՆԵՂԱԿՆ ՑԱՅԳՈՒԹԵՆ

ԳԵՇՏԱՄԵՆՑՆ Ը

Ը. ՉԻՄԲԸՆԻ, այս ինքն ի կազանդացն Նովեմբեր ամսոյն մինչեւ ց.Չատօիկ պատեքատօնին յութեորդուժ ժամու գիշերոյն, որպէս ինչ եւ ժամանակն բերիցէ, արժան է յառնել. զի սակաւիկ մի աւելի հանգիստ առեալ զկնի հասարակ գիշերին սթափեալք յառնիցեն :

Ի. Այլ որ յետ տքնութեանցն ժամանակն իցէ, այն յեղբարց որ անտեղեակքն իցեն սաղմոսի կամ Րնթերցուածոց, յուսումն նոցին ծախեցի:

Վ. Իսկ ի զատկաց մինչեւ ցկաղանդսրն Նովեմբեր ամսեան զոր ի վերագոյն ասացաք, այսպէս յօրինեալ կարգեսցին տքնութեան ժամք. զի ի սակաւ ժամանակի յորում զպէսս բնութեանն մճարիցեն եղբարքն, սկիզբն արասցեն առաւօտուն պաշտամանն, զոր այգունն ի սկիզբն լուսոյն ծաղելոյ արժան է առնել:

#### Գ Լ Ո Ւ Խ Թ

ԹԷ: ՈՐԶԵՓ ԻՆՉ ՍԵՂԱՐՈՍ ՊԵՐՏ ԻՑԷ: ԸՍՍԷ,  
ՇՈՐԺԱՄ ՏԵՏԿԱՊԵՇՏՈՆ ԼԻՆԻՑԻ

Ը. Ի ՉՄԵՐՄԵՆԻ, ասացեալ զառաջիննրն Ըստուած յօղնել ինձ նայեաց եւ Տէր յընկերել ինձ փութա<sup>147</sup>, ապա յետ այնորիկ երիցս արժան է ասել. Տէր եթէ զչթութունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո<sup>148</sup>: Այլ յետ այնորիկ զերբորդ սաղմոսն, եւ զՓառսն զկնի կցել. ապա զիննրսն երորդ շորբորդ սաղմոսն կցրդիւքն, եւ կամ երգելով: Այլ ապա զամբոսիական երգն. ապա սաղմոս վեց կըցըրդիւք հանդերձ:

Բ. Իբրև զայսոսիկ ասիցեն եւ կատարեսցեն զԼըզան, օրհնեսցէ Աքասն. եւ բազմեալ ամենեցուն յաթոսան, ընթերցցին կարգաւ եղբարքն ի մատենէն որ ի վերայ բարձրաւանդակին կայցէ, ինթերցուածս երիս. ընդ որս եւ Պատասխանիս երիս երգեսցեն: Արկու Պատասխանիս առանց զՓառսն ասելոյ ասիցեն. իսկ զկնի երբորդ ինթերցուածոյն, որ երգէն ասացէ, Փառք այլովքն հանդերձ: Օ, որ յորժամ երգիչն սկսանիցի, ապա յեա այնորիկ ամենեքին յաթոսոցն յառնիցեն ի պատիւ եւ ի մեծարանս սրբոյ Արբորդութեանն:

Գ. Իսկ զհնոց կտակարանացն եւ ըզնորոց աստուածեղէն բանիցն մատենարս, յորժամ հսկումն լինիցի, ընթեանուցուն. այլ եւ զմեկնութիւնս նոցին, որ յանուանի վարդապետաց օրթոգոքաց եւ ի համօրէն շարցն ասացեալ են:

Դ. Յետ երից ինթերցուածոցս այսոցիկ հանդերձ Պատասխանեօքն, այլ եւս սաղմոսս վեց պարս է երգել զաղէղութայն եւս ասելով: Ապա ընթերցուածոյ Առաքելոյն ի բերանոյ կարդալ. եւ Արդս եւ Պաղատանս, այս ինքն է, Տէր սղորմեա: Աւ այսպէս գիշերական սքնութեանցն զրաւ լինիցի:

Գ Լ Ո Ւ Խ Ժ

ԹԷ ԶԺԱԲԻ Ի ԺԱՄԲԵՆԵԿԻ ԵՄԲԵՐԸՆՈՑ  
 ԶԳԻՇՆԵՐԻՆ ԳՈՎՈՒԹԻՒՆՆ ԳԵՐՏ ԻՑԷ  
 ԿԵՏԵՐՆԷ,

Ը. Ի ԶԵՏԿԱՅ մինչեւ ցկաղանդս  
 նովեմբեր ամսոյն, ամենայն Արդոց  
 սաղմոսացն շափ, որպէս ի վերագոյն  
 ասացաք, լինիցի:

Բ. Բայց միայն զՆթերցուածսն ի  
 մատենին վասն զիշերացն կարճութեան  
 մի ընթեռնուցուն, այլ փոխանակ այնց  
 երից Նթերցուածոց, Նթերցուած  
 մի ի Հնոց կտակարանաց անտի ի բերա-  
 նոց ասիցեն, եւ անդէն զնովեմբ կարճ ի  
 կարճոց զՊատասխանին ածիցեն:

Գ. Այլն ամենայն որպէս ասացաւն,  
 կատարեցի: Այս ինքն է, զի մի երբեք  
 պակաս քան զերկօտասան<sup>ս</sup> սաղմոսս ի  
 զիշերի տքնութիւնսն ասիցեն. բայց  
 յերբորդ եւ յիննաներորդ շորբորդ սաղ-  
 մոսէ անտի:

Գ Լ Ո Ւ Խ ԺԱ

ԹԷ ԶԺԱԲԻ Ի ՄԻԵՇԱԲԵԹՈՋ. ՀՍԿՈՒՄՆ  
 ԼԻՆԻՑԻ

Ը. Ի ՄԻԵՇԱԲԵԹՈՋ վաղազոյն ի  
 տքնութիւնսն յառնիցեն, եւ տքնու-  
 թեանցն շափ այսպիսի ինչ լինիցի:

Լ, յս ինքն, զվեց սաղմսսն նուազեալ  
կցրդիւքն հանգերձ, որպէս վերագոյն  
կարգեցաք, եւ ամենեցուն յարդարեալ  
յօրինուածովք յիւրեանց զահոյսն բա-  
զմեալ, ընթեռնուցուն ի մատենէն, որ-  
պէս յառաջ ասացաք, չորս ՚նթեր-  
ցուածս եւ զՊատասխանիսն: Ի չոր-  
րորդ Պատասխանւոջն միայն որ երդէն,  
զՓառսն ասացէ. զոր իբրեւ սկսանի-  
ցի, անդէն ամենեքին ցածութեամբ  
յիւրեանց զահոյիցն յառնիցեն:

Ի. Յետ ՚նթերցուածոցն, այլ եւս  
վեց սաղմսս ասիցեն ըստ կարգի կը-  
ցրդիւքն եւ երդովք որպէս եւ առա-  
ջինքն: Յետ այնորիկ ընթեռնուցուն  
դարձեալ այլ եւս ՚նթերցուածս չորս  
եւ զՊատասխանիսն, ըստ կարգին որ ի  
վերոյն կարգեցաւ: Յետ այսոցիկ եր-  
գիցեն նուազս երիս ի մարդարեից, զո-  
րքս կարգիցէ Լ, բասն. եւ պարտ եւ  
պատշաճ է ընդ նուազացն աղէղութիս  
ասել:

Գ. Իբրեւ կատարեացեն զերդսն եւ  
օրհնեացէ Լ, բասն, ընթեռնուցուն այլ  
եւս ՚նթերցուածս չորս ի նորոց կառ-  
կարանաց, ըստ կարգին որ ի վերագոյն  
ասացաւ:

Դ. Իսկ զկնի չորրորդ Պատասխան-  
ւոյն սկիզբն արացէ Լ, բասն երգել զօր-  
հնութիւնն Թ, քեզ Լ, ստուած. զոր ի-

բրեւ կատարեացեն, քնթեռնուցու Վ-  
բասն Վնթերցուած Վւեւարանէ ան-  
տի, եւ ամենեքեան ահիւ եւ դողու-  
թեամբ յոսն կացցեն. եւ յորժամ կա-  
տարիցի, ասացեն ամենեքեան, Վմէն :  
Վւ անդէն զինի կցեացէ Վբասն զօր-  
հնութիւնն. Վեզ վայելէ օրհնութիւն :  
Վւ տուեալ զօրհնութիւնն, սկիզբն ա-  
բացցեն առաւօտուն պաշտամանն :

Ե. Վյս կարգ հսկմանցն զամենայն  
ժամանակս եթէ յամարայնի եւ եթէ  
ի ձմերանի նոյնպէս պահեացի ի միաշա-  
բաթոջ : Վայց թէ դուցէ, որ մի իսկ  
լիցի, անագան ինչ յառնիցեն, յայն-  
ժամ զՎնթերցուածսն կամ զՊատաս-  
խանիս պարտ է համառօտս հատանել :

Զ. Վյլ զդոյշ լինել պարտ է զի մի  
այսպիսի ինչ ուրեք դիպեացի. ապա  
թէ այնպիսի ինչ դէպ տայցէ, այրն որ  
այնր պատճառք լեւալ իցէ, հատու-  
ցումն արժանի Վտառծոյ առնիցէ յա-  
զօթիցն տեղոջ :

### Գ Լ Ո Ի Խ Ժ Բ

ԹՎ: ԶԻՆԸԴ ՊԵՐՏ ԻՅԼ: ԲՆԴ ԸՌՆԵՐՕՏՍ

ԸՌՆԵՐՕՏՍ ԶՊԵՇՏՕՆՆ ԿԵՏԸՐՍԼ

Ը. ՅԸՌՆԵՐՕՏՈՒՆ պաշտաման ի  
միաշաբաթոջ, նախ զվաթսնեբորդ վե-  
ցեբորդ սաղմսն առանց զկցուրդսն ա-



սերոյ պարտ է ասել ուղիղ: Այլ յետ այնորիկ զքառասներորդն եւ աղէզուիա. եւ ապա զհարիւրորդ եւ թնեւասաներորդ, եւ զվաթաներորդ երկրորդն:

Ի. Յետ այսոցիկ օրհնութիւնս եւ գովութիւնս, եւ ինթերցուած մի ի Յայտնութենէ ի բերանոյ, եւ Պատասխանի եւ Ամբրոսիական երգ. եւ Արդս եւ Նուագս յԱւետարանէ, եւ Պաղատանս եւ արձակեցին:

### Գ Լ ՈՒ Ի Խ ԺԳ

ԹԷ ԶԵՐԻ ՊԵՐՏ ԻՅԷ ԵԼԵԼ ԵԻՌԻՐՍ

ԶԻՌ-ԵԻՕՏՈՒ ՊԵՇՏՕՆԵ ԿԵՏԵՐԵԼ,

Ը. ՅԵՅԼ աւուրս առաւօտին պաշտօնն այսպէս վճարեցի: Ասացեն ըզվաթաներորդ վեցերորդ սաղմոսն առանց կցուրդս ասելոյ սակաւիկ ինչ մեզմով եւ հանդարտութեամբ զոր օրինակ ի միաշարաթուջ. մինչեւ ամենեքին առ հասարակ ի մի վայր եկեալ գումարիցին, յորժամ զյիսներորդն ասիցեն, զոր եւ հանդերձ կցրդիւքն պարտ է ասել:

Ի. Այլ յետ այնորիկ այլ եւս երկու սաղմոսք ըստ սովորութեան: Այս ինքն է, յերկուշարաթու, հինգերորդ եւ երեսներորդ հինգերորդ. յերեքշարաթու, քառասներորդ երկրորդ եւ

յիսներորդ վեցերորդ. ի չորեքշաբաթու, վաթսներորդ երրորդ եւ վաթսներորդ չորրորդ. ի հինգշաբաթու, ութսներորդ եւ թմներորդ եւ ութսներորդ իններորդ: Յուրբաթու, եւ թանասներորդ հինգերորդ եւ իննսներորդ առաջնորդ. իսկ ի շաբաթու, հարիւրորդ քառասներորդ երկրորդ, եւ Նուազ Երկրորդման օրինաց, որ յերկուս փառաբաժանիցի: Վանդի յայլ աւուրսն զամենայն Նուազ յիւրում աւուրն ի մարդարէից, որպէս հռոմէական եկեղեցին նուազէ, պարտ է ասել:

Գ. Յետ այսորիկ գովութիւնք. ապա ՚նթերցուած մի յՆ. ապրելոյն ի բերանոյ եւ Պատասխանի, եւ Ն. մրոսիական երգ, եւ Երգս եւ Նուազս յՆ. ետարանէ, եւ Պաղատանս, եւ ապա կատարեսցի:

Դ. Օգոստոսին կամ զերեկորի պաշտօնն ողջ պարտ է կատարել, եւ մի ուրեք զանց ինչ առնել զիւրիք. բայց միայն զի ի կատարածին զտէրունական աղօթսն լու ի լու ամենեցուն ասիցէ Ն. առաջնորդն ըստ կարգին, վասն զայթակղութեան վիշոցն որ սովոր են բուսանել. զի միաբանեալ ընդ բանս աղօթիցս այսոցիկ, ուր ասենն, թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց<sup>149</sup>, սըր-

բերցին յայսպիսի շարեաց: Իսկ յայլ  
ժամս զյետին մասն աղօթիցն պարտ է  
ասել այնպէս, զի ամենեքին տայցեն  
պատասխանի, [Ժէ Լ.ՅԼ փրկեա զմեզ ի  
չարէ:

### Գ Լ Ո Ի Խ ԺԴ

ՔԷ ԲԻԵՐԻ Ի ՏՕՆԻ ՍՐԸՈՏՆ ՎՍԿՈՒՄՆ

ԼԻՆԻՑԻ

Լ. ԱՅԼ ի սրբոց կացուրդս եւ յա-  
մենայն տօնս, որպէս ի միաշարաթուն  
ասացաք, այնպէս կատարեցին:

Ի. Իայց այսչափ միայն զի սաղմո-  
սքս կամ կցուրդս եւ կամ Ընթերցուա-  
ծըս, որ նմին աւուր ի դէպ եւ պատ-  
շաճ իցեն, ասացեն. իսկ կարգ զայն  
կալցին, որ ի վերագոյն յարգարեցաւ:

### Գ Լ Ո Ի Խ ԺԵ

ՔԷ ԸՈՐ ԿԵՄ ՅԻՆՉ ԵՄՄԵՆՆԿՍ ԸՍԻՑԻ

ԸԴԷԴՈՒԻԸ

Լ. Ի ԶԱՏԿԻ պատեքատօնէն մինչեւ  
ցՊենտեկոստէ անխափան աղէզուիա  
ասիցեն եթէ ի սաղմոսսն եւ եթէ ի  
Պատասխանիս:

Ի. Իսկ ի Պենտեկոստէից մինչեւ  
ցզլուի Քառասնորդացն զամենայն դի-  
չեր Հանդերձ յետին սաղմոսիւք միայն

ի գիշերի պաշտամունսն ասացեն: Աւ-  
 յամենայն միաշարաթոջ արտաքոյ Վա-  
 աանորդացն ընդ առաւօտեան՝ Նուադ-  
 սրն եւ ընդ առաջին, երրորդ, վեցե-  
 րորդ եւ իններորդ ժամու աղօթսն, ա-  
 սիցեն աղէղուիա: Իսկ երեկորինն հան-  
 դերձ կցրդաւն. այլ ընդ Պատասխա-  
 նւոյն աղէղուիա մի երբէք ասիցի. բայց  
 միայն ի Զատկաց մինչեւ ցՊենտե-  
 կոստէն:

Գ Լ Ո Ւ Խ Խ ԺԶ

ՋԻԼԲԻ ՋԻՍՏՈՒԵՆԵԿԷՆ ՊԵՏՏՈՆՆ ԶՕԲ

ԲՍՏ ՕԲԷՆ ՊԵՏՏ ԻՏԻ ԿԵՏԵՐԵԼ

Լ. ԱԻԹՆ անգամ յաւուր օրհնեցից  
 զքեզ<sup>150</sup>. որպէս ասէ մարգարէն: Արդ  
 զայս զեւթն զնուիրական թիւն յայն-  
 ժամ ընուցումք, յորժամ յառաւօտու,  
 յառաջին, յերրորդ եւ ի վեցերորդ եւ  
 յիններորդ ժամու, յերեկոյին եւ ի  
 շանդատեան, զմերոյ ծառայութեան  
 զպատշաճս վճարիցեմք: Վանդի զտո-  
 ցին իսկ զաւրնջեան ժամուց ասաց  
 մարգարէն, թէ Եւթն անգամ յաւուր  
 օրհնեցից զքեզ:

Ի. Իսկ զգիշերոյ տքնութեանցն ա-  
 սէ նոյն մարգարէ. Ի մէջ գիշերի յառ-  
 նէի խոստովան լինել առ քեզ<sup>151</sup>: Ա-  
 պա յայս ժամանակս մատուցուք Լ-

բարչին մերում գոյութիւնս վասն իրաւանց եւ արդարութեան նորա: Այս ինքըն, յառաւօտու, յառաջին, յերրորդ, ի վեցերորդ եւ յիններորդ ժամու, յերեկոյին եւ ի շանդասեան յարիցուք խոստովան լինել նմա:

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Է

ԹԷ ԳՐԵՆԻ ՍԵՂԵՄԱՍ Ի ՆՄԻՆ ԺԵՄԱՐ

ԳՐԵՏ ԻՏԷ ԸՍՅԷ,

Ը. ՕՊԻՇԵՐՈՅ եւ զվազորդայնոյ սաղմոսացն կարգ յօրինեալ եղաք. աւն առ այժմ զմնացեալն տեսցուք:

Ի. Յառաջնում ժամու սաղմոսս երիս պարտ է ասել. այլ ուրոյն եւ ոչ մի անդամ միայն զՓառսն ասելով: Օջրհնութիւն նորին ժամու յեա զլստուած յօգնելն ասելոյ, նախ քան զսաղմոսսն պարտ է սկսանել: Իսկ յեա երից սաղմոսացն վճարելոյ, ընթեռնուցու ինթերցուած մի եւ Արդ, եւ Տէր սղորմեա. եւ արձակեսցին Ժ:

Գ. Իսկ յերրորդ, ի վեց եւ յինն ժամու դարձեալ նոյն կարգ պաշտեսցի: Ազօթք, այս ինքն Արդք եւ Օրհնութիւնք նոյին ժամուց եւ սաղմոսք երեք, ինթերցուած, Արդ եւ Տէր սղորմեա. եւ պատարաղք մատչիցին:

Դ. Աթէ մեծ ինչ իցէ ժողովն, կը-

ցրրդիւք հանգերձ. իսկ եթէ փոքր ի-  
ցէ, սաղմոս միայն ասասցեն:

Ե. Իսկ երեկորի պաշտօնն շորս սաղ-  
մոսիւք, կցրդիւք հանգերձ վճարեսցի.  
Եւ յետ սաղմոսացն, ՚նթերցուած պարա  
է ընթեռնուլ: Ապա Պատասխանի,  
Եմբրոսիական երգ, Երգ եւ Նուագ  
Ճււեատարանէ, Պաղատանք, Եղօթք  
տէրունականք եւ Սաղթանք լինիցին:

Զ. Իսկ Հանգստեան ժամն ընդ ե-  
րիս սաղմոսն զոր ասիցեն, վճարեսցի:  
Օ սաղմոսս զայսոսիկ վարկպարազի իմն  
եւ առանց կցրդաց պարա է ասել: Ա-  
պա յետ այսոցիկ նորին ժամու Օր-  
հնութիւն, ՚նթերցուած մի, Երգ,  
Տէր սղորմեա, եւ օրհնեսցեն. եւ ա-  
պա Սաղթանք լինիցին:

### Գ Լ Ո Ի Խ Ժ Ը

ԹԵ՛ ԱՐՊԻՍԻ ԻՆՉ ԿԵՐԳԵՒ ԶԵՆԴԱՐՈՍՍՆ

ԸՍՍԻ, ՊԵՐՏ ԻՑԻ:

Ը. ՅԵՆԳ եւ միշտ յառաջին տը-  
ւրնջեան ժամս պարա եւ պատշաճ է  
ասել Աստուած յօգնել ինձ նայեա եւ  
Տէր յընկերել ինձ փութա, եւ փառք:  
Յետ այնորիկ Երգ ըստ իւրաքանչիւր  
ժամուն պատշաճի. եւ ապա շորս զը-  
լուխս ի հարիւրորդ ութեւասներորդ  
սաղմոսէ անտի յառաջնում ժամու մի-

աշարաթուն: Իսկ յայլ ժամս, այս ինքըն է յերրորդումն, ի վեցերորդումն եւ յիններորդին, երիս երիս գլուխս ի հարիւրորդ ութեւտասներորդ սաղմոսէ անտի զոր վերագոյն գրեցաք, ասասցին:

Ի. Այլ յառաջնում ժամու երկուշարաթի աւուրն սաղմոսս երիս պարտ է ասել, այս ինքն զառաջինն, զերկրորդն եւ զվեցերորդ: Այնպէս յառաջնում ժամու աւուրց իւրաքանչիւր մինչեւ ցմիաշարաթին ասասցեն կարգաւ երիս երիս սաղմոսս մինչեւ ցիննեւտասներորդ սաղմոսն: Այլ այնպէս զի իններորդ սաղմոսն ընդ եւթնեւտասներորդին, ի կրկին փառս բաժանեսցի: Աւ այնպէս առնիցեն, զի հսկմունք միաշարաթին միշտ ի հարիւրորդ սաղմոսէ անտի ըսկսանիցին:

Գ. Յերրորդ, ի վեցերորդ եւ յիններորդ ժամ երկուշարաթի աւուրն զինն գլուխս որ մնացեալ իցեն ի հարիւրորդ ութեւտասներորդ սաղմոսէ անտի, յիւրաքանչիւր ժամս երիս երիս, պարտ է ասել:

Դ. Արդ յորժամ հարիւրորդ ութեւտասներորդ սաղմոսն յաւուրս երկուս վճարեալ բովանդակեսցի, այս ինքն է ի միաշարաթոջն եւ յերկուշարաթուն. յերեքշարաթուն անդէն ի հարիւրորդ իննեւտասներորդ սաղմոսէ անտի մինչեւ

ցհարիւրորդ քսաներորդ եւթներորդն սաղմոսս ինն այս ինքն երիս երիս յիւրաքանչիւր յերրորդ ի վեցերորդ եւ յիններորդ ժամու։ Օգրս եւ մինչեւ ցմիաշարաթին՝ պարտ է կրկնել յիւրաքանչիւր ժամու։ Բայց եւ զյօրինուած Օրհնութեանցն եւ ՚նթերցուածոց եւ Երգոց զնոյն օրինակ պարտ եւ պատշաճ է պահել զամենայն աւուրս։ Բայս ինքն է, այնպէս զի միաշարաթին միշտ ի հարիւրորդ ութեւտասներորդ սաղմոսէ անտի սկսանիցի։

Եւ Իսկ յերեկոյի պաշտօնն զօր հանապաղ սաղմոսս շորս երգեսցենն զեղզեղեալ բարբառովք, զորս եւ ի հարիւրորդ իններորդ սաղմոսէ անտի պարտ է սկսանել մինչեւ ցհարիւրորդ քսաներորդ եւթներորդն. բայց միայն յայնցանէ, որ յայլեւայլ ժամս ինոցանէ որոշիցին, այս ինքն է, ի հարիւրորդ եւթնեւտասներորդէ մինչեւ ցհարիւրորդ քսաներորդ եւթներորդ, եւ ի հարիւրորդ երեսներորդ երրորդէ, եւ ի հարիւրորդ քսաներորդ երկրորդէ. զայլսն ամենեւին յերեկորին պարտ է ասել։ Եւ քանզի երեք սաղմոսք պահասեն, վասն այսորիկ իսկ ընդ այնօսիկ որ լայնադոյն եւ պարարտագոյնքն իցեն, պարտ է խառնել, զորոց զթիւ համարոյն ի վերագոյն կարգեցաք.



այս ինքն է ընդ հարիւրորդի երեւներորդի ութերորդի, եւ հարիւրորդի քառասներորդի երրորդի, եւ հարիւրորդի քառասներորդի չորրորդի. իսկ զհարիւրորդ վեշտասաներորդն, քանզի փոքր է, արժան է ընդ հարիւրորդ եւթնեւասաներորդին յեռեալ յարել:

9. Արդ յետ զկարգ երեկոյի սաղմոսացն յարդարելոյ, այլքն որ մնան, այս ինքն է Տնթերցուածք, Պատասխանիք, Օրհնութիւնք, Արգք կամ Նուագք, ըստ օրինակին զոր վերագոյն կարգեցաք, կատարեսցին: Իսկ ի Հանգստեան զօր հանապազ զնոյն սաղմոսան կրկնեսցեն, այս ինքն է զչորրորդն, զիննաներորդն եւ զհարիւրորդ երեւներորդ երրորդ:

10. Յետ զառւընջեան սաղմոսացն զկարգան յօրինելոյ, զայլ եւս սաղմոսարն որ յաւելուցուն, կշիռ հասարակ պարտ է բաժանել ի պահս եւթն գիշերաց. այս է, բաժանելով զորս ի նոսա երկարագոյն սաղմոսքն իցեն, եւ երկստասան սաղմոսք առ մի մի գիշեր կարգեսցին:

11. Առաւել քան զամենայն այնմ իմն խրատ տամք միտ գնել, զի թէ ումեք կարգ սաղմոսացս այսօցիկ շթուիցի ինչ հաճոյ, եթէ այլազ ինչ լաւ եւս հաշուիցի, կարգեսցէ. միայն թէ այսմ ուշ ունիցի զի այնպէս յօրի-

նեալ կարգեցի ամենայն, որպէս զի  
 յամենայն եւթներորդս սաղմոսարանն  
 հարեւր եւ յիսուն գլխովքն իւրովք բո-  
 վանդակեալ կատարեցի. եւ ի միա-  
 շարթթոջն միշտ յառաջնմէ գլխոյ ան-  
 ախ տքնութեանն սկիզբն առնիցի :  
 Վանդի կարի իսկ հեղդ եւ ծոյլ ի սպա-  
 սու կրօնաւորութեանն զանձինս ցու-  
 ցանիցեն վանականքն, յորժամ պակաս  
 ինչ ի սովորական Երդոյն եւ ի սաղմոսա-  
 ցրն բնդ շրջանս եւթներորդին ասիցեն,  
 յորժամ ընթեռնուցուիք թէ սուրբ  
 շարքն մեր ի միում աւուր անխափան  
 կատարէին զայն ինչ, զոր մեք որ ի  
 ծուլութիւն հասար, իցէ թէ յեւթն  
 աւուրս ողջ բովանդակ անխափան կա-  
 տարէաք :

Գ Լ Ո Ի Խ ԺԹ

ՊԵՍՆ ԻՐԵՏՈՒ ՍԵՂԱԲՈՍ ԵՍՆԻՆՈՅ

Ը. ՆԵՍԵՍԵՄՔ զի ամենայն ուրեք  
 մերձ է Մատուած, եւ զի յամենայն տե-  
 ղիս աչք Տեառն դիտեն զբարիս եւ բզ-  
 շարս<sup>152</sup> : ՄԼ առաւել այսմ հաւա-  
 տամք առանց երկմտութեան յորժամ  
 զաստուածեղէն պաշտամունսն կատա-  
 րիցեմք :

Ը. Ս ասն որոյ պարս եւ պատշաճ է  
 մեզ յիշել յամենայն ժամ զայն զոր

ասաց մարգարէն . Ծառայեցէք , ասէ ,  
Տեառն երկիւղիւ <sup>153</sup> : Աւ դարձեալ ,  
Թէ Սաղմոս ասացէք նմա իմաստու-  
թեամբ <sup>154</sup> : Աւ , Առաջի Հրեշտակաց  
սաղմոս ասացից քեզ <sup>155</sup> :

Սմին իրի զմտաւ ածցուք , եթէ որ-  
պիսի ինչ առաջի Աստուածութեանն  
եւ Հրեշտակաց նորա արժան իցէ մեզ  
լինել : Աւ այնպէս կայցեմք ի սամսոսին  
որպէս զի միտք մեր միաբանեսցին ընդ  
բարբառոյ մերում :

### Գ Լ Ո Ի Խ Ի

Գ.ԸՄՆ ՄՆԾԵՐԵՆԵՑ ՅԵՂ.ՕԹՄՆ

Ը . Աթի յորժամ ընդ ճոխս խօսել  
ինչ կամիցիմք , շիշխեմք յայն յանդրդ-  
նել բայց եթէ ցածութեամբ եւ պատ-  
կառանօք , ապա քանի՛օն առաւել  
ամենայն խոնարհութեամբ եւ սրբու-  
թեամբ որաիւ զԱստուած որ ամենայնի  
Տէրն է , աղաչել պարտ իցէ :

Ը . Արդ քանզի ոչ ի բազում խօսից  
մերոց լսելի լինիցիմք <sup>156</sup> , այլ անբժու-  
թեամբ որաի եւ ողբովք արտասուաց ,  
նմին իրի իսկ արժան է ազօթիցն Հա-  
մառօսս եւ սուրբս լինել . բայց եթէ  
դուցէ ի զԹոյ աստուածեղէն շնորհացն  
դք ձգեալ յօժարիցի :

Գ . Այլ ի ժողովս ամենն լին իսկ կար-

Ճառօտս պարտ է զաղօթսն հատանել .  
 և և լինել նշանի յՆ. աջնորդէ անտի,  
 ամենեցուն յսան կալ միանգամայն :

Գ Լ Ո Ի Խ Ի Ա

ՊԵՍՆ ԳՂԻՆՈՐԵՅ ՄԵՆԵՍԵՆԻ

Լ. Աթէ մեծ իցէ ժողովն, ընտրեալ  
 ցին ի նոցանէ և զբարբ որոց բարիօք դը-  
 նացս ցուցեալ իցէ և և ի քաջութեան  
 վկայեալ, և և կարգեսցին նոքա Վլխա-  
 ւորք :

Բ. Սոքա, այնոցիկ որք ընդ իւրեանց  
 գլխաւորութեամբն իցեն, ըստ Նստու-  
 ծոյ պատուիրանացն և և հրամանաց Ն-  
 բասուն իւրեանց յամենայն ժամ զութե-  
 և խնամ ցուցանիցեն :

Գ. Այլ Վլխաւորս զայնոսիկ արժան  
 է ընտրել, յորս վստահ լեալ Նբասուն,  
 ընդ նոսա զիւր բեռինան բաժանեսցի :  
 Աւ ոչ եթէ ըստ կարգի ինչ ընտրու-  
 թիւնն լինիցի, այլ ըստ դնացիցն ար-  
 ժանաւորութեան և և ըստ իմաստու-  
 թեան վարդապետութեանն :

Դ. Աթէ ի Վլխաւորացն դք տա-  
 բապարտ իմն ամբարտաւանութեամբ  
 փքացեալ, արժանի ինչ յանդիմանու-  
 թեան լինիցի, կշտամբեալ միանգամ  
 և և երկիցս, յերբորդումն թէ ուղղելն  
 չկամիցի, ի պատուոյն մերժեսցի, և և

այլ որ արժանաւոր ի նորին տեղւոջ  
կարգեացի: Օտոյն եւ վասն Աերակա-  
ցունն պատուիրեմք:

Գ Լ Ո Ւ Խ Ի Բ

ՔՅԸԲԻ ԵՆՑԻՑԵՆ ԱԵՆԵԿԵՆՔ

Ե. ԱՅՐ իւրաքանչիւր առանձինն  
յիւրում անկողնին ննջիցէ:

Բ. Սահիճք իւրաքանչիւր այնպէս  
յարդարեացին, որպէս ինչ եւ Աբասուն  
լաւ թուիցի:

Գ. Աթէ Տնար իցէ, ամենեքին ի մի-  
ում վայրի ննջիցեն. իսկ եթէ բազմու-  
թիւնն չտայցէ թոյլ ասան տասն կամ  
քսան քսան ընդ երիցագոյնան որբզ-  
նտայն խնամիցեն, հանդիցեն:

Դ. Անթեղ անդադար ի նմին խցի  
լուցեալ կայցէ մինչեւ ցառաւօտ:

Ե. Ամենեքին զդեցեալք ննջիցեն  
գօտի կամ չուան ընդ մէջ:

Զ. Վանակս մի կալցին առ իւրեանս,  
զի մի գուցէ սր ննջիցենն, խոցիցին ի  
մէջ քնոյն:

Է. Աւ զի յամենայն ժամ կաղմ եւ  
պատրաստ դտանիցին վանականքն. եւ  
ի լինել նշանին առանց դանդաղելոյ յա-  
բուցեալ, փութասցի կանխել սյր քան  
զընկեր իւր ի պաշտօն Աստուծոյ. սա-  
կայն ամենայն ցածութեամբ եւ մեղ-  
մական զգօնութեամբ:

Բ. Մանկագոյնքն յեղբարցն ոչ ունիցին իւրեանց դահոյս առանձին, այլ խառն ընդ երիցագոյնսն :

Թ. Ի կանխել յՆստուծոյ պաշտօնն, այր զընկեր իւր յորդորիցէ շափով, զի մի պատճառս ինչ ունիցին քնէածքն :

### Գ Լ Ո Ի Խ Ի Գ

Պ.ԸՍՆ Բ.ԵՆՆՅԵՒՈՐՄՆ ՈՐՈՇՆԵԼՈՅ Ի

ՀԵՂ.ՈՐԴՈՒԹԵՆԵԼ

Ը. Եթէ հետո որ իցէ յեղբարցն կամ անհնազանդ կամ ամբարտաւան կամ տրանջօղ, կամ թէ ընդդէմ դարձցի յիմիք կանոնացն սրբոց, եւ պատուիրանաց երիցագունացն զտանիցի անարգու, այնպիսին ըստ հեառն մերոյ հրամանին, եթէ խրատեալ միանդամ եւ երկիցս ի ծերունեաց անախ ի ծածուկ, չուղղիցի ինչ, առաջի ամենեցուն յայանանախատ լեալ կշտամբեացի :

Բ. Իսկ եթէ եւ ոչ այսու ինչ ուղղութիւն ցուցանիցէ, եթէ առնուն ի միտ թէ որպիսի պատուհաս իցէ, ի կցորդութենէ ի բաց մերժեացի :

Գ. Եւ եթէ անպիտան գացի, մարմնաւոր վրէժս տայցէ :

Գ Լ Ո Ւ Խ Ի Գ

ՔՅԵՐԻ ԵՐԺԱՆ ԻՑԷ՝ ՄՆԵՅՆԷԼ, ՔՈՒՐ Ի

ԿՑՈՐԴՈՒԹՅԱՆԷ՝ ՀԵՂՈՐԴՈՒԹՅԱՆ

Ը. ԲՍՏ չափոյ յանցանացն եւ բղ-  
չափ խրատուն եւ մերժելոյ պարտ է կըշ-  
ուել . այլ թէ զխորդ, այն յԼքասուն  
կաման է ապաստան :

Ի. Բայց թէ դք յեղբարցն ի թե-  
թեւս ինչ յանցուցեալ զտանիցի, ի սե-  
ղանոյ եւեթ հաղորդութենէն զըկեսցի :

Գ. Իսկ որ ի սեղանոյն զըկեսցաւ,  
զայս ինչ պահեսցէ : Ի մատուան մի ա-  
սել սաղմոս կամ կցորդ, եւ ոչ զԼնթեր-  
ցուածն կարգալ, մինչեւ ի հատուցումն  
յանցանացն : Իսկ զկերակրոցն մսիթա-  
րութիւն յետ եղբարցն առնուցու չա-  
փով եւ ի ժամուն, զոր պատշաճ հա-  
մարիցի նմա Լքասն : Արպէս զի թէ ի  
վեց ժամու եղբարքն ի հաց լինիցին,  
նա զիւր կերակուրն յիններորդումն առ-  
նուցու : Եթէ նոքա յիններորդին, սա  
երիկունն, մինչեւ պատշաճ հատուցմամ-  
բն ներելոյ թողութեան հասանիցէ :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ե

ՊԵՍՆ ՄՆԾԵՑ ԻՆՉ ՅԵՆՑԵՆԵՑ

Ը. Եթէ մեծաց ինչ յանցանաց  
պատժապարտ դք զտանիցի, ի սեղա-

նոյ եւ ի յաղօթիցն հաղորդութենէ մի-  
անդամայն սրոշեսցի :

Ի. Մի ոք յեղբարցն հաղորդակից  
յիմիք երբեք նմա լինիցի, եւ ոչ իսկ  
բանիք անգամ : Միայն միայնակ յիւր  
գործ պարապեսցի, հանապազորդեալ  
յողբս ապաշխարութեանն : Յիշեսցէ  
զահաւոր բարբառ Առաքելոյն որ ասէն .  
Մատնել զայնպիսին սատանայի ի սա-  
տակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի  
յաւուր հեառն<sup>157</sup> :

Գ. Իսկ զկերակրոց միսիթարութիւնն  
առանձինն առնուցու շափով ի ժամուն,  
զոր վանաց Երէցն նմա ի դէպ հա-  
շուեսցի :

Դ. Մի ոք որ մեկնելոյն իցէ, զնա  
օրհնեսցէ . նոյնպէս եւ ոչ զկերակուր,  
զոր նմին տայցեն, օրհնեսցեն :

### Գ Լ Ո Ի Խ Ի Զ

ՊԵՍՆ ՈՐ ԲՆԻ ՈՐՈՇԵՐԱՍՆ ԵՌԵՆՅ ԵՐԵՍՈՒՆ  
ՀՐԵՄԵՍՆԱՅ ՀԵՂՈՐԴԻՑԻՆ

Եթէ որ եղբայր, առանց Աբա-  
սուն համարձակելոյ, ընդ եղբօր որ ս-  
րոշեալն իցէ, զիարդ եւ իցէ հաղորդել  
յանդգնեսցի, կամ ընդ նմա խօսել, եւ  
կամ թէ հրեշտակութիւն ինչ առ նա  
ուղղել, ինքն եւս նոյնգունակ պատու-  
հասիք պատժեալ սրոշեսցի :



Գ. Լ. Ի Խ Ի Է

ԹԷ՝ ՈՐՈՊ, ՕՐԻՆԵԿԵԻ ԳԵՐՏ ՆԻ ԳԵՏՇԱՆ  
 ԻՑԷ ԵՐԵՍՈՒՆ ԻՆԵՄ ՏԵՆԵՍ, ՈՐՈՇՆՈՅՆ  
 Ի ՀԵՂՈՐԴՈՒԹՅՆՆԻ:

Ը. ԸՄԵՆԱՅՆ խնամով փոյթ յան-  
 ձին կալցի Ըբասն վասն եղբարցն յան-  
 ցուցելոց, զի Ոչ է պիտոյ բժիշկ ողջոց  
 այլ Հիւանդաց<sup>158</sup> :

Թ. Ա ասն որոյ զամենայն փոյթ ի մէջ  
 առեալ իբրեւ զբժիշկ իմաստուն, ա-  
 ռաքիցէ զԱրիցադոյնն յեղբարցն, որ-  
 պէս թէ մխիթարիչս ի ծածուկ. որք  
 որպէս թէ գաղտ մխիթար լիցին եղբո-  
 րն որ ալէկոծն ծովածուփ իցէ, եւ ի  
 զեղջ խնարհութեան թելադիր նմա  
 լինիցին. եւ մխիթարեացեն զնա զի մի  
 յառաւել արամութենէն ընկղմեացի<sup>159</sup> :

ԱՅԼ, որպէս Առաքեալ ասէ, Հաս-  
 տատեացեն զնա ի սէր, եւ աղօթս  
 առնիցեն վասն նորա ամենեքեան<sup>160</sup> :

Գ. Վանզի արժան է Ըբասուն մե-  
 ծապէս խնամ տանել, եւ ամենայն հո-  
 գարարծութեամբ եւ խելօք հնարիւք  
 դուն ի վերայ գործել, զի մի ոք յոչ  
 խարացն որ նմայն հաւատացան, կո-  
 բիցէ: Վիտասցէ զի Հիւանդաց յանձին  
 կալաւ խնամ տանել, եւ ի վերայ ող-  
 ջոց մի ճոխանաւ: Աւ երկիցէ ի սպառ-

նալեաց մարգարէին . որով ասացն Վստուած, եթէ Չպարարան զնուիք, եւ զտկարն ոչ զօրացուցանէիք<sup>161</sup> : Փութալ քաջի հովուին օրինակի գթութեանն նմանելոյ, որոյ թողեալ զիննըսուն եւ զինն ոչխարսն ի լերինս<sup>162</sup>, միոյ ոչխարին մոլորելոյ ել ի խնդիր . եւ եղև վշտակից տկարութեան նորա մինչեւ ի վերայ սուրբ ուսոց իւրոց արժանի արար դնելոյ եւ այնպէս ի հօան տանել :

### Գ Լ Ո Ի Խ Ի Ը

Պ ԵՍՆ ԵՅՆՈՑԻԿ ՈՐ ԲԵՐՈՒՄ ԵՆԳԵՄ

ԻԲԵՏԵԱԼ, ՉՈՒԴՂԻՑԻՆ

Ե. Աթի դք եղբայր ստեպ ստեպ վասն որոց եւ պէտ յանցանաց յանդիմանեալ եւ որոշեալ եւս, եւ չուղղիցի, խտաագոյնս եւս կշտամբեացի . այսինքրն է, գանից պատուհասիւք զվրէժն լուծանիցէ :

Բ. Ապա եթէ եւ ոչ այնպէս զանձն ուղղեալ իցէ, եւ կամ թէ, որ մի իսկ լինիցի, յամբարտաւանութիւն հատեալ ջատագով եւս իւրոց գործոցն կայցէ, յայնժամ զայն զոր իմաստուն բժիշկն առնէ, գործիցէ նմա եւ Վբասն :

Գ. Աթէ կատարեաց զդարմանն եւ զսպեղանիս խրատուն, եւ զգեղս աս-

տուածեղէն պատգամացն, եւ ապա յետոյ եւ զվերջին խարանսն ի հաղորդութենէ ի բաց որոշելոյ, եւ զգաւազանացն հարուածս. սակայն եւ այնպէս տեսանիցէ թէ ոչ ինչ օգտի բովանդակ հնարիւք իւրովք, յաւելցէ ի նոսին եւ զայն որ մեծն է, զիւր եւ զեղբարցն աղօթս միանգամայն վասն նորա. զի Տէր որ ամենայնի կարօղն է, աջողեսցէ զփրկութիւն եղբօրն հիւանդացելոյ :

Գ. Այլ եթէ եւ ոչ այնու ինչ բուժեացի, յայնժամ ապա զսուրն հատու որոշիչ, որպէս ասէ Առաքեալն, Աբասն ի կիր առնուցու. Ի բաց արարէք զչարն ի միջոյ ձերմէ<sup>163</sup>: Աւ գարձեալ, թէ Անհաւատն եթէ մեկնի, մեկնեացի<sup>164</sup>. զի ոչխար մի հիւանդ զամենայն հօան ապականիցէ:

### Գ Լ ՈՒ Խ ԻԹ

ԵԹԷ ԱՐԺԱՆ ԻՑԻ ԳՆՐԱՍԻՆ ԲՆԳՈՒՆԵՍԻ,

ՔՅԴՆԵՐՄՆ ԵՆՆԵՆ Ի ԳՆՆԵՑ

Ա. Այլևս որ վասն իւրոց շարեացն ելանիցէ, կամ ի վանաց մերժեացի. եթէ գառնալն կամիցի, խոստացի նախ ուղղել զայն ամենայն որոյ վասնն ել մերժեցաւ: Աւ ապա զյետին տեղին կալցի, զի այնու հանդէս լինիցի խանարհութեան նորա:

Ի. Իսկ եթէ վերտօտին Ելանիցէ, ըստ նմին օրինակի ընդունիցին զնա մինչև ցերբօրց նուազ :

Գ. Այլ զիտասցէ, թէ ամենեւին չէք մուտ նմա միւսանդամ դառնալոյ :

Գ Լ Ո Ւ Խ Լ

ՅԵՂԱԳՍ ԽԵՆԿԵՆՑ ՈՐ Ի ՄԵՏԵՂ ՀԱՍԵԿԻ  
ԻՑԵՆ ԹԷ ԶԻԵՐԻ ԻՄԵՏԵՍԻՈՑ ԻՑԵՆ

ԱՄԵՆԱՅՆ Հասակի եւ մտաց զգատու թեան, արժան է ունել իւր շափս առանձինն : Այսն այսօրիկ մանկունք կամ աղայք աւուրքք, կամ որ սակաւս զիտիցեն առնուլ ի միտ թէ որպիսիինչ պատիժ սրօշեն իցէ, այնպիսիք քանիցս անդամ եւ յանցանիցեն, կամ յերկար պահօք վշտազնեացին, կամ սաստիկ դանիւք ստիպեացին, զի բլծրչկիցին :

Գ Լ Ո Ւ Խ Ա

ՎԵՍՆ ՄԵՏԵԿԵՐԵՐԻ ՎԵՆԵՑՆ ԹԷ ԶԻԵՐԻ  
ԻՄԵՏԵՍԻՈՑ ԻՑԻ

Ը. ԱՆՏՐԵՍՅԻ ի միաբանութենէ Մատակարար վանաց այր իմաստուն, կատարեալ վարուք, լուրջ, մի շատակեր, մի ամբարտաւան, մի խառվայոյզ, մի զրկօղ, մի դանդաղ, մի անառակ, այլ երկիւղած յՆստուծոյ, եւ որ համօրէն ժողովոյն որպէս հայր լինիցի :

Բ. Օ՞ւսմանն անցանց հոգ յանձինն ունիցի . առանց հրամանի Աքասուն մի ինչ առնիցէ . որ ինչ հրամային, պահիցէ . զեղբարսն մի տրամեցուցանիցէ :

Գ. Աթէ իցէ ուրեք, զի խնդրիցէ ինչ սք յեղբարցն օրինակաւ որ ոչ վայել իցէ, մի տրամեցուցանիցէ զնա անգոսնելովն . այլ վայելընթեամբ եւ ցած ութեամբ, որում շարաշարն խնդրեաց, մի տացէ :

Դ. Օ՞սոգի իւր պահիցէ, յիշելով միշտ զայն զոր Առաքեալն ասաց, եթէ Արքարուքն պաշտիցեն, աշտիճան բարի անձանց իւրեանց շահին <sup>165</sup> :

Ե. Հիւանդաց, տղայոց, հիւրոց, եւ աղքատաց ամենայն հոգաբարձութեամբ խնամ տարցի . եւ գիտացել հաւաստեաւ, զի վասն ամենեցուն սոցա համարս տալոց է յաւուրն դատաստանի :

Զ. Օ՞ւսմանայն անօթ մենաստանին, եւ զրնաւ կահն եւ զկարասի, որպէս զնուիրական անօթս համարիցի :

Է. Մի ինչ յոչինչ համարեալ զանց զնովաւ առնիցէ : Մի յազահութիւն հատանիցի եւ մի յանառակութիւն . եւ մի ինչ հանիցէ ի կահուց վանիցն . այլ զամենայն շտիով առնիցէ եւ բոս Աքասուն պատուիրանի :

Ը. Յառաջ քան զամենայն զխոնար-

Հուլիսն ունիցի, եւ որում չունիցին զինչ տայցէ, բանս բարիս փոխանակ ընդ այնր մատուցանիցէ ի պատասխանիս. որպէս եւ գրեալ է. Աւել է բան բարի քան զտուրս լաւս<sup>166</sup> :

Թ. Օգամենայն զոր նմա Հայրն Հրբաման տայցէ, ընդ իւրով խնամով կալցի: Աւ մի յանդգնեալ յօժարեացի յայն զոր նմայն արդելուցու:

Ժ. Օգասմանեալ սոճիկն առանց ինչ ամբարտաւանութեան եւ դանդաղելոյ մատուցանիցէ եղբարցն, զի մի գայթակղեացին: Յիշելով զտէրունի բանն, թէ իմ իմիք գտանիցի պատժապարտ որ զմի ի փոքրկանցն գայթակղեցուցանիցէ<sup>167</sup>:

Լ. Վ. Աթէ մեծ իցէ ժողովն, տացին նմա միսիթարութիւնք, յորոց օգնականութիւն գտեալ մտադիւրութեամբ զիւր պաշտօնն կատարեալ կալցի:

Բ. Վ. Ի ժամու տացի զոր ինչ պարան իցէ տալ. եւ խնդրեացի զոր ինչ արժան իցէ խնդրել. զի մի դք խռովեացի կամ արտմիցի ինչ ի տան Աստուծոյ:

### Գ Լ Ո Ի Խ ԼԲ

ՊԸՄՆ ԿԸՀՈՒՅ ԵՐԿԵԹԻՅ ԵՒ ԻՐԸՅ

ՄԵՆԸՍՏԸՆԻ

Ը. Վ. ՍԸՄ կահուց վանացն որ յերկաթոյ իցեն, կամ ի զգեստուց, կամ

այլ որոց եւ պէտ իրաց ընտրեացէ Հայ-  
րքն եղբարս, յորոց վարսն եւ ի բարս  
վստահ իցէ: Աւ նոցա զամենայն, որ-  
պէս ինչ եւ շայեկան թուիցի, տացէ ի  
պահպանութիւն եւ ի ժողովել:

Ի. Յորոց Աբասն մութհակ առ իւր  
ունիցի, զի յորժամ յայն պաշտամունս  
սահմանեալ եղբարքն զմիմեանս յա-  
ջորդեացեն, գիտացէ զինչ տայն եւ  
զինչ ընդունիցի:

Դ. Իսկ եթէ աղտեղիս ինչ եւ հեղ-  
գութեամբ զիրս վանացն վարիցէ ոք,  
կշտամբեալ յանդիմանեացի. եւ եթէ  
ոչ ուղղեացի, ընդ կանոնական խրատուն  
անկանիցի:

### Գ Լ Ո Ւ Խ ԼԳ

ՍԹԷ ՊԵՐՏԻՑԻՆ ՊԵՆԵԿԵՆՔ ՈՒՆԵՍԻ, ԻՆՉ ԻԹԲ  
ԵՌԵՆՉԻՆՆ

Ը. ՍՆՆԵԻԸՆԴ զայս չար արմատաբի  
տակակոտոր խլել պարտ է ի վանացն,  
զի մի ոք իշխեացէ տալ կամ առնուլ  
ինչ առանց հրամանի Աբասուն:

Ի. Աւ ոչ ունել ինչ առանձինն, եւ  
ոչ մի ինչ իսկ ամենեւին: Մի մատեանս,  
մի տախտակս<sup>ժԷ</sup>, եւ մի գրափիսն որ է  
գրիչ, այլ եւ ոչ ինչ իսկ բնաւ: Վան-  
դի որ իւրեանց մարմնոցն շիշխիցեն, նո-  
քա եւ կամս չպարտին ունել ըստ իւ-

բեանց հաճոյիցն, այլ ամենայն կարեւորաց ի շօրէ մանայն ակն ունել, եւ շունիցին եւ ոչ ինչ, զոր Աբասուն շիցէ տուեալ կամ հրամայեալ:

Գ. Ամենայն ինչ հասարակաց իցէ ամենեցուն, որպէս եւ դրեալ է. եւ շիշխիցէ ոք ասել թէ իցէ իւր, կամ թէ Սա իմ, սա քո:

Դ. Աթէ յայսպիսի յանհնարին շարիս ոք դասնիցի յօժարեալ, խրատեալ մի անգամ եւ երկիցս, եթէ ոչ զգաստասցի, ընդ կշտամբութեամբ անկանիցի:

#### Գ Լ Ո Ի Խ ԼԳ

ԵԹԷ ԵՄԵՆԵՐԻՆ ՀԵՍԵՐԵԱ ԳԵՐՏԻՑԻՆ

ՔԻԵՐՏԻՈՐՍՆ ԲՆԴՈՐՆԵԼ

Լ. ԳՐԵԱԼ է, թէ Նաշիտին իւրաքանչիւր, որպէս ումէք պիտոյ ինչ լինէր<sup>168</sup>: Արդ չասեմք, որ քաւ եւ մի լիցի, թէ ակն ինչ երեսաց պարտ իցէ առնուլ, այլ ի տկարութիւնսննայել: Արպէս զի ում սակաւ ինչ պիտոյն իցէ, գոհացի զՆստուծոյ եւ միտրամեսցի. իսկ որ բազմօքն կարօտանայցէ, մի ընդողորմութիւնն մեծամտեսցէ զոր ընկալաւ, այլ վասն տկարութեանն խոնարհեսցի. եւ այնպէս ամենայն անգամքն ի խաղաղութեան իցեն:



Բ. Յառաջ քան զընառ, մի արք-  
տունջ երեւեսցի վասն իրիք պատճա-  
ռանաց գործովք կամ բանիւք կամ  
նշանօք: Արթէ երեւեսցի ուրեք, սաս-  
տիկս խրատեսցի:

### Գ Լ Ո Ի Խ ԼԵ

ՅԵՂԵՂՍ ԸԵՐԵԹԵՄՏԻՑ ԻՌՀԵԿՏԻՐՑԻ

Ը. ԱՂԵՐԲ միմեանց սպասաւորեա-  
ցեն. այնպէս զի մի ոք ի խոհակերելոյ  
զանձն ի բաց թափիցէ. բայց եթէ  
գուցէ խօթ ոք իցէ, կամ թէ ի գործս  
ինչ ոք կարեւորս յոյժ պարապեսցի.  
զի անտիմեծ եւս վարձք զանձին:

Բ. Այլ տկարացն տացին սփոփու-  
թիւնք, զի մի արամութեամբ զայս  
առնիցեն: Իսկ ամենեցուն մտիթարու-  
թիւն ըստ պայմանի միարանութեանն  
իցէ, կամ ըստ տեղւոյն ուր գասնիցին:

Գ. Աթէ մեծ ինչ իցէ ժողովն ի խո-  
հակերելոյ ազատ կայցէ Սատակարարն,  
կամ որք մեծաց ինչ օգտութեանց, որ-  
պէս ասացաքս, պատկառ կայցեն: Այլք  
միմեանց սպաս արկանիցեն սիրով:

Դ. Ար ի շարաթամտիցն ելանելոցն ի-  
ցէ, աւել ամիցէ ի շարաթուն, եւ  
զղենջակսն որով եզրարքն զձեռան եւ  
զոտս սրբիցեն, լուանայցէ:

Ե. Օճամենեցուն զոտս ինքն եւ որ

ի շարաթամուտան մտանելոց իցէ,  
լուսացեն :

Չ. Օջանօթս վանացն տայցէ Մա-  
տակարարին սուրբս եւ ողջս, զորս եւ  
տայցէ Մատակարարն այնմ որ մտա-  
նելոցն իցէ ի պաշտօնն, զի զխտասցէ  
զինչ տայն եւ զինչ բնդունի :

Լ. Իսկ շարաթամուտք միով ժա-  
մաւ յառաջ քան զկերակուրն առցեն  
իւրաքանչիւր զկարգեալ ռոճիկսն ըմ-  
պելոյ եւ հացի, որպէս զի ի կերակրոց  
ժամն առանց արանջելոյ եւ առանց  
բազում վաստակոց եղբարցն սպասաւո-  
րեսցեն : Եւ ի տօնական աւուրսն մին-  
չեւ ի ժամ պատարագին ժուժկալեա-  
ցեն :

Բ. Իսկ ի միաշարաթոջն որ մտանի-  
ցենն եւ ելանիցեն ի շարաթամուտ  
անդէն իսկ ի տեղւոջն ուր աղօթս մա-  
տուցանիցեն, յետ վճարելոյ առաւօտին  
պաշտամանցն, առաջի ամենեցուն ի ծու-  
նրբ իջեալ, խնդրեսցէ աղօթս վասն իւր :  
Եւ որ ելանէն ի շարաթամոիցն, ա-  
սասցէ զկցուրդն Օրհնեալ ես դու Տէր  
Բարուած, որ օգնեցեր ինձ, եւ մխի-  
թարեցեր զիս :

Թ. Օյս երիցս կրկնեալ եւ ընկա-  
լեալ զօրհնութիւնն ելանիցէ : Եւ սպա-  
մատուցեալ որ մտանելոցն իցէ, սասա-  
ցէ, Բարուած յօգնել ինձ նայեաց, եւ

Տէր յընկերել ինձ փութա . զոր եւ երիցս կրկնեսցեն ամենեքին . եւ ընկալլալ օրհնութիւն մտանիցէ :

Գ Լ Ո Ի Խ ԼԶ

ՊԵՍՆ ԵՂՐԵՐՑ ԷՐԻՆԵՐԵՑ

Ը . ԸՌԵՋԻՆ եւ առաւել քան զամենայն, հիւանդաց պարտ է խնամ տանել . որպէս զի իբրեւ արդարեւ Վրիտտոսի, այնպէս պարտ է նոցա ի սպասուկալ, զի ինքն իսկ տասց . Հիւանդ էի, ասէ, եւ տեսէք զիս<sup>169</sup> . եւ, զոր արարէք միում ի փոքրկանցս յայտցանէ ինձ արարէք<sup>170</sup> :

Ը . Աւնորին իսկ հիւանդք գիտացնն, զի վասն Աստուծոյ պատուոյն նոցա պաշտօն հարկանի . եւ մի աւելի թախանձելոյն արամեցուցանիցեն զեղբարսն որ զնոսայն պաշտիցեն :

Գ . Այլ այնպիսեայն մտադիւրադոյնս պարտ եւ պատշաճ է տանել, զի եւ մեծամեծս եւս վասն նոցա ընդունելոց են հատուցմունս :

Դ . Ապա փոյթ մեծ յանձին կայցի Աբասն, զի մի իւիք անտես առնիցին :

Ե . Ազգարց հիւանդաց լինիցի սենեակ զատեալ առանձինն : Աւսպասաւորն երկիւղած իցէ յԱստուծոյ եւ ժիր եւ խնամակալու :

Չ. Օրազանիս, քանիցս անդամ  
թէ օգուտ իցէ, ի կիր առնուցան:  
Այլ սղջոցն, եւ որ կարի մանկազոյնքն  
իցեն, դուն ուրեք շնորհեսցին:

Է. Բայց եւ զմիս ուտել հիւանդաց  
եւ որ բնաւ խակ տկարն իցեն, շնորհեալ  
իցէ առ ի դարման:

Ը. Այլ յորժամ ապաքինեսցեն,  
բատ ընտելական սովորութեան ամենեւ  
քին ի մտոյ ժուժկալեսցեն:

Թ. Այլ զգուշանալ պարտի Աքանն  
Սատակարարին եւ պաշտօնէիցն, զի  
մի զանց ինչ ուրեք զհիւանդովքն առ  
նիցեն: Օ ի որովք աշակերտքն յանցա-  
նիցեն, պատճառք յանցուածոցն առ  
նա ինքն ընթանան:

### Գ Լ Ո Ի Խ ԼԷ

ՊԸՄՆ ԾԵԲՈՅ ՆԻ ՄԸՆԿԸՆՑ

ԹԻՒՊԸՑ եւ մարդկեղէնս բնութիւն  
ինքնին ի գութ խոնարհի առ սոցա հա-  
սակսն, ծերոցն ատեմ եւ տղայաւուրց  
մանկանց, սակայն եւ կանոնաց իշխա-  
նութիւն խնամածու լինիցի նոցա,  
զմտաւ ածեալ միշտ զգոցա տկարու-  
թիւնն եւ ոչ մի ինչ կանոնաց ճշդու-  
թիւնս ի նոցա կերակուրսն պահանջել.  
այլ լիցի նոցա մարդասէր խնամակա-  
լութեամբ կանխել քան զկանոնեալ  
ժամանակսն:

Ը. Չէ պարտ պակասել ի սեղանոյ ընթերցուածոյն յորժամ եղբարքն ուտիցեն :

Ի. Եւ մի վայրապար ով ոք եւ իցէ ի ձեռս առնուցու զմատեանն եւ ընթեռնուլ ժտեսցի անդէն . այլ որ ընթեռնելոցն իցէ զշարաթն ողջոյն , ի միաշարաթոջն մտանիցէ :

Գ. Եւ որ մտանիցէն զկնի պատարազի եւ Հաղորդութեանն , խնդրեսցէ յամենեցունց աղօթս վասն իւր . զի ի բաց առնիցէ ի նմանէ Ղատուած զՏոգին ամբարտաւանութեան . եւ ասացեն ընդ նմա ամենեքեան երիցս զկրցուրդն զայն , Տէր եթէ զշրթունս իմ բանաս , այլովքն Հանդերձ : Եւ այնպէս ի սեղևոջ ուր զաղօթսն մատուցանիցեն ընկալեալ զօրհնութիւն , մտանիցէ յընթերցուածն :

Դ. Առութիւն բազում ի Հացին լինիցի . մինչեւ շինելոյ լսելի ձայնի իրիք կամ շնչման , բայց միայն այնք որ ընթեռնուցուն անդէն :

Ե. Իսկ զկարեւորսն այնոցիկ որ ուտիցենն եւ ըմպիցեն , այնպէս պաշտեսցեն միմեանց եղբարքն , զի մի ոք կարօտանայցէ խնդրել ինչ :

9. Այլ թէ պիտոյ ինչ ուրեք լինիցի, առաւել քան ձայնիւ նշանացի իմն բարբառով խնդրիցեն:

10. Մի ոք յընթերցուածոյ անախ կամ յայլուստ ուստեք խնդրել ինչ յանդգնեսցի, զի մի պատճառս տացէ. բայց միայն Առաջնորդն եթէ կամիցի ասել ինչ համառօտս ի շինութիւն:

11. Այլ մինչ շեւ մատուցեալ իցէ եղբօրն յընթերցումն, տացեն ինչ նմա ուտել յաղագս սրբոյ Հաղորդութեան. զի գուցէ ծանր ինչ իրք նմա թուեսցին հանդարտել տանել պահոցն:

12. Այլ յետ այնորիկ ընդ խոհակերոցի շարթամանուտն եւ ընդ պաշտօնեայս կերիցէ:

13. Մի ըստ կարգի ինչ ընթեանուցուն կամ երգիցեն եղբարքն, այլ որ ըզլսօղան շինիցեն:

### Գ Լ Ո Ւ Խ Լ Թ

#### ՊԵՏՆ ՉԵՓՈՅ ԿԵՐԵԿՐՈՑ

1. ԲԱԵԼԿԱՆ Համարիմք վասն օրըստօրէ կերակրոց, եթէ ի վնջյեւթն եւ յինն ժամու, զերկուս եւեթ եփոյս հասուցեալս յամենայն սեղանս վասն բազմաց տկարութեան. զի թէ ի միօջէն ուտել ոք չկարիցէ, միւսովն դարմանեսցի:

Բ. Ապա բաւական իցեն ամենայն  
եղբարց երկու եփոյք: Իսկ եթէ դու-  
ցեն միրգք, եւ դալար ունդք, յաւելցի  
եւ երրորդ ազգ:

Գ. Եւ խորձի մի հացի կշռեալ, շատ  
լիցի աւուրն, եթէ միանգամ միայն լի-  
նի կերակուր, եւ եթէ ի ճաշու եւ յըն-  
թրեաց ժամն միանգամայն:

Դ. Իսկ եթէ ընթրիս եւս առնել  
կամիցին, զերիր մասն ի լտերէ անտի  
պահեսցէ Սատակարարն, եւ յըն-  
թրեաց ժամն բաշխեսցէ:

Ե. Ապա եթէ մեծ ինչ ուրեք վաս-  
տակ լինիցի, համարձակ իցէ Աբասուն  
եթէ պատշաճ ինչ համարեսցի, յաւե-  
լուլ ինչ:

Զ. Ամենայն շուայտութիւն ի բաց  
լինիցի. սակայն եւ կարօտութիւն ինչ  
յիմիք մի սպրդեսցի յեղբարսն: Վան-  
զի ոչ այնպէս հակառակ է քրիստոնէի  
որպէս շուայտութիւն. որպէս եւ Տէրն  
մեր ասէ. Տեսէք, մի ծանրացին սիրտք  
ձեր շուայտութեամբ եւ հողովք որս-  
վայնի<sup>171</sup>:

Է. Այլ մանկագունիցն հասակաւ ոչ  
նսվին չափով լինիցի կերակուրն, այլ  
սակաւ քան զայն, որ մեծագունիցն  
բաշխեսցի. յամենայնի ինայութեան  
ուշ ունելով:

Ը. Օգորգոտանեաց միս ճաշակել

ամենեքեան հրատարեացին . բայց միայն յայնչանէ որ ամենեւին տկարք եւ հիւանդք իցեն :

## Գ Լ Ո Ի Խ Խ

ՅԵՂԵՂՍ ԶԵՓՈՅ ԲՄԳՆՈՒՌՈՅ

Ը . ԻՒՐԵՔԸՆԶԻՒՐ զք զիւր շնորհ ունի յՆստուծոյ, սա այսպէս, եւ նա այնպէս<sup>172</sup> . նմին իրի եւ զկերակրոցն շափ փոքր մի ճշդելով կարգեմք : Բայց նայեցեալ ի հիւանդացն տկարութիւն, աւուր աւուր հիմենի<sup>ժ</sup> միոջ գինի վասն ամենեցուն բաւական համարիմք : Այլ որոց տայ Տէր զքաջութիւն պնդութեան ժուժկարութեան, գիտացեն զի զվարձս վաստակոց իւրեանց ընդունելոց են :

Բ . Իսկ եթէ պէտք տեղւոյն, կամ աշխատութիւն եւ տապ ամառայնոյ աւելի ինչ պահանջիցեն, յիշխանութեան Առաջնորդին իցէ առնել զինչ պատշաճ իցէ . այլ յամենայնի այնմ իմն ուշ եղեալ նայեացի, զի մի յազեցութիւն ի ներքս մտանիցէ եւ կամ արբեցութիւն . մանաւանդ զի ընթեռնումք<sup>ժ</sup> եւս եթէ չէ ամենեւին վանականաց գինի :

Գ . Այլ քանզի այժմու վանականքրս շմարթին այսմ խելամուտ լինել, դոնեայ այսմ միայն զիջանիցիմք, զի մի ցյադ ըմպիցեմք, այլ շափ իմն . զի գի-



նի եւ զզգաստան զիտէ ի հաւատոց ար-  
կանել <sup>173</sup>:

Դ. Բայց եթէ պէտք տեղւոյն այն-  
պէս ինչ պահանջիցեն, զի եւ ոչ ըստ  
չափոյն զոր վերագոյն ասացաք, դաս-  
նիցի. այլ սակաւ ինչ քան զայն կամ  
գրեթէ ոչ ինչ իսկ, գոհացին զՆ.ս-  
տուծոյ, որանգն բնակիցեն, եւ մի արք-  
տընջեացեն: Քանզի յառաջ քան զամե-  
նայն զայս խրատ տամք, զի առանց  
արանջանաց վճարիցի ամենայն:

Գ Լ Ո Ի Խ Խ Ա

ՅՈՐԹԻՄ ԺԵՄՈՒ ԵՐԺԱՆ ԻՅԷ ԵՂՏԵՐՏՆ

ԸՌՆՈՒԻ, ԿԵՐԵԿՈՒԲ

Ը. Ի ՍՐԲՈՅ Զատկէն մինչեւ ցՊեն-  
տեկոստէն ի վեց ժամու ճաշ ուտիցեն,  
եւ յերեկոյն յընթրիս բազմեացին:

Ի. Այլ ի Պենտեկոստէիցն ընդ ա-  
մսոն ողջոյն, եթէ անդոց երկք չգու-  
ցեն վանականաց, եւ տապ ամսոանն  
ոչ խոշտանկիցէ, ի չորեքշաբաթու եւ  
յուրբաթու մինչեւ ցինն ժամ պահե-  
ցեն. իսկ յայլ աւուրս ի վեցերորդումն  
ճաշեացեն:

Գ. Աթէ գործս ի յանդի ունիցին,  
կամ խորշակ ամսոանն սաստիկ իցէ,  
գարձեալ զկարգ վեցերորդ ժամուն ու-  
նել յՆ.բասուն խնաման յանձն լիցի: Այլ

այնպէս ինչ յարդարեալ կարգիցէ զամենայն, զի եւ ոգիքն փրկեսցին, եւ զոր առնենն առանց ինչ տրանջելոյ առնիցեն :

Դ. Ի շորեքտասաներորդ օրէ անտի Սեպտեմբեր ամսեան մինչեւ ցգլուխ Վառասնորդացն, յիններորդին ուտիցեն միշտ :

Ե. Իսկ ի Վառասնորդացն մինչեւ ի օգոստիկ, ընդ երեկոյս ճաշիցեն. այլ այնպէս զի որ ուտիցենն լուսոյ ճրագի չլինիցին կարօտ. այլ մինչ դեռ աւուր կայցէ, վճարեսցի ամենայն :

Չ. Այնպէս եւ ժամ ճաշուն եւ ընթրեացն այնպէս յօրինեալ կարգեսցի, զի ամենայն լուսով լինիցի :

#### Գ Լ ՈՒ Խ ԽԲ

ՔԻ ՔԻՆԻ ՀԵՆԳՍՏԵՆ ԳԵՇՏԵՄԵՆ ԶԻ :

ԵՐԺԵՆ ՈՒՄԵՐ ԻՕՄԵԼ :

Բ. ԱՆՆԿԱՆԱՅ յամենայն ժամ պարտ եւ պատշաճ է լուսթեան պատկառ կալ, բայց եւս առաւել ընդ ժամանակս ցայգութեան :

Բ. Ա ամն այնորիկ յամենայն ժամանակի եթէ պահիցենն եթէ ուտիցեն, միայն թէ ժամանակ ճաշոյ իցէ, վաղվաղակի իբրեւ յառնիցեն յընթրեաց անտի, բաղմեսցին ամենեքեան ի

միասին . եւ մի զք յեղբարցն ընթեռ-  
նուցու զպատմութիւնս , եւ կամ զվարս  
չարց եւ կամ այլ ինչ որ զլսողսն շինիցէ :  
Բայց ոչ զեւթն<sup>ն</sup> զպրութիւնսն կամ  
զթաղաւորացն . քանզի յայնժամ զայն-  
պիսի դիրս ընթեռնուլ ոչ յօգուտինչ  
լինիցի մտաց տկարաց : Բայց յայլ ժա-  
մանակս ընթեռնուցուն :

Գ . Այլ թէ աւուրք պահոց իցեն ,  
յետ պաշտաման երեկորին , զկնի սա-  
կաւու միոյ անդէն առ ընթերցուած  
ճառիցն մատիցեն , որպէս սասցաք . եւ  
ընթերցեալ ութ կամ տասն էջս կամ  
որչափ ինչ ժամն հրամայեսցէ , մինչ զեռ-  
ամենեքին ի մի վայր ժողովեալ իցեն ,  
թէպէտ յիւրպաշտամունս զբաղեալ զք  
իցէ , ընթանայցէ եւ նա :

Դ . Աւ այնպէս ամենեցուն ժողո-  
վեալ ի մի , զպաշտօնն կատարեսցեն . եւ  
որք միանգամ զչանդստեանն կատա-  
րեսցեն , շիցէ նոցա համարձակ այնու  
հետեւ խօսել ընդ ումեք :

Ե . Աթէ ուրուք զըռութեան կա-  
նոնաւս զանց արարեալ իցէ , ծանունս  
պատժեսցի : Բայց եթէ գուցէ պէտք  
ինչ հիւրոցն ի վերայ հասանիցեն , կամ  
թէ Բրասն ինչ հրամայիցէ . սակայն  
եւ այնմ եւս մեծաւ զգօնութեամբ ,  
ցածութեամբ եւ զգաստութեամբ ար-  
ժան է լինել :

ՊԵՍՆ ՈՐ ԸՌ ԸՍՏՈՒԾՈՅ ՊԵՇՏՈՆՆ ԵՒ  
 ԸՌ ՍԵՂԱՆՆ ԵՆԵՊԷՆ ՀԵՍԵՆԻՅԵՆ

Ը. Ի ՃԸՄ աստուածեղէն պաշտա-  
 մանն անդէն ի լսել անդ զձայն նշանա-  
 կին, թողեալ զամենայն որ զինչ եւ առ  
 ձեռն կայցէ, բազում ճեպով ընթա-  
 նայցեն. սակայն ցածութեամբ, զի մի  
 խեղկատակութիւն ճարակ գտանիցէ:  
 Ապա մի ինչ նախամեծար քան զԱս-  
 տուծոյ պաշտօնն համարիցի:

Բ. Ա ասն որոյ թէ ի զիշերական  
 հսկմունսն զկնի փառաց քառասնե-  
 րորդ շորրորդ սաղմոսին հասանիցէ ոք,  
 զոր եւ յայս սակս իսկ կամիմք զի ա-  
 մենեւին երկայնելով եւ գեղգեղելով  
 ասիցի, ոչ յիւրում ի կարգին կայցէ ի  
 գնդին, այլ յետոյ քան զամենեսին. եւ  
 կամ ապաշխարիցէ ի տեղւոջ զոր վա-  
 սըն այնպիսեաց ծուլիցն հեղգացելոցն  
 կարգեալ իցէ Աբասուն, զի տեսանիցէ  
 զնա ինքն Հայրն եւ ամենեքին իսկ որ  
 անդն կայցեն. մինչեւ յանկ ելեալ ա-  
 ւարտեսցին աստուածեղէն պաշտա-  
 մունքն, ի հասարակաց շինութիւն:

Գ. Ա ասն այսորիկ հաճոյ թուե-  
 ցաւ այնպիսեացն ի յետին տեղւոջ կալ  
 եւ մեկնեալ որոշեալ յայլոցն, զի տե-  
 սեալ յամենեցունց, անձամբ յանձնէ

յամօթոյ անտի իւրեանց իւրովի խայտառակեալ ուղղեսցին :

Դ. Օ ի եթէ արտաքոյ քան զաղօթից տեղին մնայցեն, թերեւս այնպիսի որ իցէ, որ յեցեալ ննջիցէ, կամ թէ նստցի իսկ արտաքոյ, կամ յառասպելս հատանիցի, եւ տացի զամ եւ մուտ չարին. այլ ի ներքս մտանիցէ, զի մի զքնան կորուսանիցէ, եւ յայնմանէ զոր յանցեալն ուղղեսցի :

Ե. Իսկ ի ցայգութեան ժաման որ որ յՆստուծոյ պաշտօնն զկնի կցրդին եւ փառաց առաջնորդ սաղմոսին որ յետ կցրդին ասի, հասանիցէ, ըստ օրինակին զոր վերագոյնն կարգեցաք, ի յետին տեղւոջ կայցէ. եւ մի ժտեսցէ յանդրդնել խառնել ի դունդս սաղմոսերգուացըն, մինչեւ հատուցանիցի, եւ Նբասն տայցէ համարձակութիւն թողութեամբն իւրով :

Զ. Իսկ ի սեղանն որ որ յառաջ քան զկցուրդն ոչ հասանիցէ, զի ընդ ամենեսին զերգն ասիցէ, եւ աղօթս արացէ, եւ ամենեւին միանգամայն ի ճաշ բաղմիցին. այլ հեղգութեամբն կամ չարութեամբ ոչ ժամանիցէ, երկիցս յանդիմանեալ վասն այսորիկ, եթէ դարձեալ չուղղիցի ինչ, մի իշխեսցցէ հասարակաց հացին հաղորդել. այլ ուրոյն մեկնեալ յայլոցն հաղորդութե-

նէ զկերակուրն առնուցու միայն, հանեալ ի նմանէ զբաժին զինւոյն մինչեւ հատուցանիցէ, եւ ուղղիցի: Օչոյն վաշաման կրեացէ եւ որ ոչ գտանիցի ի ժամ աղօթիցն զոր զինի կերակրոյն առիցեն:

Լ. Մի դք իշխեսցէ յառաջ քան ըզժամադիր ժամն, եւ կամ յետոյ յանդրդնեւ առնուլ ինչ կերակուր կամ ըմպելի:

Ը. Այլ եթէ մատուցանիցէ ինչ ումէք Առաջնորդն եւ նա ընդունել շառնուցու յանձն, ի ժամուն յորժամ կամիցի զայն, զոր հրաժարեացն առնուլ յառաջ եւ կամ այլ ինչ, ամենեւին մի ընդունիցի, մինչ զպատշաճ ուղղութիւնն ցուցանիցէ:

### Գ Լ Ո Ի Խ Խ Գ

Պ.ԱՍՆ ԵՃՆՈՑԻԿ ՈՐ Բ.ԵՏԵՈՒ, ՈՐՈՇՆՈՒ, ԵՆ  
ԻՑԵՆ Ի ՀԵՂ, ՈՐԴՈՒԹՅՆԸ: Թ: Բ.ԵՐԴ  
ՀԵՏՈՒՑԵՆՆՈՒՑ ԻՑԵՆ

Ը. ՈՐ դք յաղագս մեծի ինչ յանցանաց յաղօթից կամ ի սեղանոյն հազորդութենէ զրկեսցի, ի ժամուն յորում Աստուծոյ պաշտօնն յաղօթից տեղւոջն կատարիցի, առ սեամս դրանցըն յորապս անկեալ կայցէ լռեալ, միայն զգլուխ յերկիր եղեալ, կործան

յերեսս ընդ սաիւք ամենեցուն որ յա-  
զօթից ելանիցեն, անկեալ կայցէ: Աւ-  
զայս արասցէ ցորժամ Աբասուն բաւա-  
կան թուեսցին:

Ի. Յորժամ հրաման առնուցու ի  
Հօրէն, գայցէ փարիցի յոսս նորա եւ  
ապա ամենեցուն եւս, եւ հայցեսցէ ի  
նոցանէ ազօթս առնել վասն իւր:

Պ. Աւ յայնժամ սւրեմն եթէ հրա-  
մայիցէ Աբասն, ընկալցի ի գունդն կամ  
ի կարգն զոր ինքն նմա պատուիրիցէ .  
այլ այնպէս զի սաղմոսս ինչ կամ Մն-  
թերցուածս, կամ թէ այլ ինչ այսպի-  
սի յազօթից տեղւոջ մի ժառանգէ ասել,  
մինչեւ հրամայեսցէ միւսանդամ նմա  
Աբասն:

Ղ. Աւ յամենայն ժամ յորժամ Աս-  
տուծոյ պաշտօնն կատարիցի, անկանիցի  
յերկիր ի տեղւոջ յորում կայն, եւ այն-  
պէս հատուցանիցէ: մինչեւ հրաման  
տացի նմա դադարել այնու հետեւ յա-  
պաշխարութենէն:

Լ. Այլ թէ վասն գոյզն ինչ դք յան-  
ցանաց ի սեղանոյ միայն որոշեսցի, յա-  
զօթից տեղւոջն ապաշխարեսցէ: Աւ  
զայս առնիցէ մինչեւ հրաման տալ Ա-  
բասուն, օրհնել, եւ ասել թէ բաւա-  
կան է:

Գ Լ Ո Ւ Խ ԽԵ

ՎԱՍՆ ՈՐՈՑ ՍԻՍԻՒՅՆՆԸ ԵՆԴՕԹՍ

Լ. Եթէ սաղմոս զք ասիցէ, կամ Պատասխանի, կամ Փոխ կամ Ացուրդ կամ Ինթերքուածս ընթերցցի, եւ սխալիցէ, եթէ անդէն իսկ առաջի ամենեցուն յանդիմանեալ ոչ ուղղեսցի, մեծաւ եւս վրիժու առեցեսցի. փոխանակ զի ոչն կամեցաւ ուղղել խոնարհութեամբ զայն ինչ զոր անփոյթութեամբն յանցեաւ :

Ի. Իսկ մանկաին որ այնպիսի ինչ յանցանիցեն, զգան ըմպիցեն :

Գ Լ Ո Ւ Խ ԽԶ

ՎԱՍՆ ԱՅՆՈՑԻԿ ՈՐ ԵՆՇՈՒ ԻՆՉ ԻՐՍ

ԵՆՆՏԵՆԻՏԵՆ

Լ. Եթէ զք ի վաստակս ինչ վանացն վաստակիցէ ի խոհակերոցին, կամ ի մառանի, կամ ի պաշտաման սպասուն, կամ յերկանս, ի պարտիզի կամ յարուեստս ինչ, կամ ուր ուրեք եւ իցէ, եւ յանցանս ինչ յանցանիցէ կամ թէ խորտակիցէ ինչ եւ կամ կորուսանիցէ, կամ այլ ինչ ուրեք երբեք թէ յանցանիցէ. թէ ինքնին իւրովի եկեալ վաղվաղակի զհատուցումն առաջի Վրասուն կամ միաբանութեանն ոչ անիցէ, եւ կամ իւրովին դատախազ իւրոց յանցանացն ոչ լինիցի, այլ այլ զք



Ծանուցեալ ազդ առնիցէ, ծանունս պատուհասեալ պատժեսցի:

Ի. Իսկեթէ պատճառք մեղաց ուզւոցն ծածուկք ինչ իցեն, Վրասունն միայն կամ հոգեւոր երիցանցն յայտնեսցէ. որոց փոյթ իցէ զԵրեւանց եւ զայլոց վէրսն բժշկել, եւ ոչ եթէ ի հրապարակագոյժ արկեալ ձաղել:

### Գ Լ Ո Ի Խ ԽԷ

Պ.ԵՍՆ ԵՇԵՆԵԿԵՆՈՅ ԶԺ.ԵՄ ԵՍՏՈՒՆԾԵԳ.ԷՆ

ՊԵՇՏԵՄԵՆՆՑՆ

Ը. ԿՈՉԵԼ զեղբարսն ի ժամ Վասուծոյ պաշտամանն ի գիշերի եւ ի արւընջեան, գործ իցէ Վրասունն. կամ ինքնին անձամբ զնոյն կատարել, եւ կամ միում ումէք յեղբարցն որում այնպիսի պաշտօն յանձն իցէ, աւանդեսցէ զայն հոգ. զի ամենայն ինչ ի պատշաճ ժամուն վճարիցի:

Ի. Օստղմոսս կամ զկցուրդս ըզկնի Վրասունն իւրաքանչիւր ըստ իւրում կարգին որոց հրամայեալն իցէ, կատարեսցեն: Իսկ երգել կամ ընթեռնուլ մի ոք իշխեսցէ, բայց միայն որ բաւականն իցէ. զի որ լսիցենն, շինեսցին<sup>174</sup>. զոր եւ խնարհութեամբ եւ դողութեամբ առնիցէ որում հրամայեալ իցէ Վրասունն:

Ը. ԳՆԱՏԱՐԿՈՒԹԻՒՆ թշնամի է սղ-  
ւոց. նմին իրի իսկ պարտ եւ պատ-  
շաճ է եղբարցն ժամանակս ինչ ի վաս-  
տակս ձեռաց ծախել, եւ զայլսն դար-  
ձեալ յաստուածեղէն ընթերցուածս :  
Արդ ըստ օրինակիս այսմիկ արժան հա-  
մարիմք զժամանակսն բաժանել :

Բ. Ի Զատկէ մինչեւ ցմուտս Հոկ-  
տոբեր ամսեան յարուցեալ ընդ առա-  
ւօտն, յառաջնմէ ժամէ անտի դրեթէ  
մինչեւ ցշորս ժամ ի կարեւորս վաս-  
տակեցինս Իսկ իշորս ժամէ անտի մին-  
չեւ ցվեց ժամ յընթերցուածս պա-  
րապեցին :

Գ. Աւ յեա վեց ժամու իրբեւ ի  
սեղանոյ յառնիցեն, հանգիցեն ի մա-  
հիճս իւրեանց ամենայն լուսթեամբ .  
կամ թէ ընթեռնուլ ինչ ոք կամիցի,  
այնպէս ընթեռնուցու, զի անհանգիսս  
ինչ զայլսն մի առնիցէ :

Դ. Աւ պաշտեցեն զինն ժամու  
պաշտօնն կանուխ յընդմիջել անդ ութ  
ժամուն. եւ դարձեալ յայն դայցեն զոր  
պարտն իցէ առնել, մինչեւ ցերեկոյ :

Ե. Այլ թէ հարկ տեղւոյն, կամ  
աղքատութիւնն արմտիս ինչ իւրեանց  
ձեռօք ժողովելոյ ստիպիցեն պարա-

պեւ, ընդ այն մի ինչ տրամեացին, քան-  
զի ստոյգ վանականք լինիցին, յորժամ  
վաստակօք ձեռաց իւրեանց կեցցեն,  
որպէս եւ շարքն մեր եւ Առաքեալք:  
Այլ ամենայն շափով լինիցի վասն կար-  
ճամտայն:

Գ. Ի մօից շոկտորերի մինչեւ ցը-  
ղլուխ Քառասնորդացն, մինչեւ ցեր-  
կրորդ ժամն ցրուն, զընթերցուածովք  
դայցեն:

Կ. Յերկրորդ ժամն, զերրորդ ժա-  
մու պաշտօնն կատարեսցեն, եւ մին-  
չեւ ցինն ժամն ամենեքին յիւրեանց  
գործս որ հրամայիցի, վաստակեսցին:

Ը. Ի լինել առաջնոյ նշանին յինն  
ժամու իւրաքանչիւր դք յիւրոց գործոցն  
մեկնեսցի, եւ կազմ եւ պատրաստ կայ-  
ցէ, մինչեւ երկրորդ նշանն հարկանիցի:

Թ. Իսկ զկնի կերակրոցն զիւրեանց  
գրովքն դայցեն, կամ սաղմոս ասիցեն:

Ժ. Յաւուրս Քառասնորդացն յա-  
ռաւօտէ մինչեւ ցերրորդ ժամն ողջոյն,  
ի գործ որ նոցա աւանդեսցի, պարա-  
պեսցեն:

Ը. Յաւուրս յայսոսիկ առցէ այր  
իւրաքանչիւր զիւր մատեան ի մատենա-  
գարանէն, եւ ընթերցցի զընուն կար-  
գաւ:

Ը. իսկ զմատեանսն ի զլուխ Քա-  
ռասնորդացն պարտ է տալ:

ԳՃ. Այլ յառաջ քան զամենայն ընտրեսցի այր մի կամ երկու յերկիցազունից անտի, որ շուրջ եկեալ այց առնիցէ մենաստանին ի ժամանակսն, զորս յընթերցուածսն ծախիցեն եղբարքն, տեսանել թէ գտանիցի ուրեք ծոյլ եւ հեղգ որ ի վատութիւն կամ յառասպելս հատանիցի եւ չիցէ մտադիր ընթերցուածոյն, եւ ոչ միայն անձինն օգուտ չիցէ, այլ եւ այլոցն եւս խափան:

ԳԴ. Այնպիսի ինչ դք, որ մի իսկ լիցի, թէ գտանիցի երբեք, մի անգամ եւ կամ երկիցս ուղղեալ եւ չսգաստացեալ, կանոնական ուղղութեամբ պատժեսցի, զի այլքն երկիցեն:

ԵԴ. Յանժամ ժամու այր առ ընկեր իւր մի յարեսցի:

ԵԵ. Ի միաշարաթուոջն յընթերցումն պարապեսցին ամենեքեան, բայց միայն ի նոցանէ որոց այլ եւ այլ պաշտամունս յանձն առեալ իցէ:

ԵԶ. Աթէ իցէ ոք ուրեք այնպէս ծոյլ եւ հեղգ, զի զմտաւ ինչ ածել կամ ընթեռնուլ ոչ կամիցի կամ ոչ կարիցէ, գործս ինչ այնպիսւոյն տացեն գործել, զի մի պարապորդ իցէ:

ԵՇ. Իսկ տկարաց եւ գիրդ եղբարց այնպիսի արուեստ կամ գործ հրամայիցի, զի մի գատարկասունս ուսանիցին, եւ մի գարձեալ ի բռնութենէ վաստա-

կոցն ընկճեալք ի փախուստ ինչ մտա-  
բերիցեն: Այլ ընդ սոցա տկարութիւնս  
նայել հաւաստեալ, փութոյ Աքասուն  
գործ լինիցի:

Գ Լ Ո Ւ Խ ԽԹ

ՅԵՂԵՅՍ ԳԵԼՊԵՆՈՒԹԵՆՆ ԳԵՌԵՍՆՈՐԴԵՑ

Ը. ԹԵՊԵՏ եւ յամենայն ժամանա-  
կի վայել է վանականին զպահպանու-  
թիւն քառասնորդաց պահոց ունել,  
այլ քանզի այդ սակաւուց քաջութեան  
է, խրատ տամք գոնեայ յաւուրս Քա-  
ռասնորդացս ամենեւին սրբութեամբ  
զոճն ցուցանել, եւ զամենայն զայլոց  
ժամանակաց զանփոյթութիւնս յա-  
ւուրսս յայտոսիկ սուրբս բառնալ ի միջոյ:

Ի. Արդ այս յայնժամ ըստ արժան-  
ւոյն լինիցի, եթէ յամենայն շարեաց  
զանձինս կարծիցեմք, եթէ աղօթից ըս-  
տեպ կայցեմք հեծութեամբ, եթէ ըն-  
թերցուածոյ եւ բեկման սրտի եւ ըզ-  
գաստութեան սկիցեմք: Օ ի յաւուրսս  
յայտոսիկ յաւելուցումք ինչ ի հանա-  
պազորդ կշիռ մերոյ ծաղայութեանս.  
որպիսի ինչ, աղօթս աւելի քան զս-  
վորականն, կամ կերակրոց ինչ եւ ըմ-  
բելեաց ժուժկալութիւն: Այլ իւրա-  
քանչիւր աւելի քան զչափն որ նմայն  
հրամայեալ իցէ, ինքնին յիւրոց կամաց  
անտի մատուցանիցէ: Աստուծոյ ի ցըն-

Ժուժիւն շողւոյն սրբոյ: Այս ինքն,  
հասանիցէ առնուցու ինչ ի մարմնոյ իւր-  
մէ, մասն ինչ ի կերակրոյ եւ յըմպելոյ,  
եւ մասն ի քնոյ անտի եւ ի շատխօսու-  
թեանէ, եւ ի խեղկատակութեանէ. եւ  
ինդութեամբ հոգեւոր ուրախութեամբ  
սրբոյ Զատիին ակն կալեալ մնացէ:

Դ. Այլ զոր ինչ մատուցանիցէն,  
շօրն իւրում յայտ առնիցէ, եւ նորա  
օրհնութեամբ եւ կամօք. զի ինչ որ ա-  
ռանց թողլ տալոյ հոգեւոր շօրն լինիցի,  
ոչ վարձուց ինչ այլ յանդգնութեան է  
եւ ընդունայնապարժ փառաց: Ապա  
ըստ կամոյ շօրն պարտ եւ պատշաճ է  
առնել զամենայն:

### Գ Լ Ո Ւ Խ Ծ

ՊԵՍՆ ՈՐ ՀՅՈՒԹ ԵՆԴՕԹԻՅ ՏԵՂԻՈՑԻ: ԸՆՏԻ  
ՊԵՍԵԿԻՏԵՆ ԿԵՄ ԹԷ Ի ՏԵՆԵՊԵՐՎԻ ԻՏԵՆ

Ը. Այլ յարձիգ որ ամենեւին հեռի ու-  
րեք ի վաստակս իցեն, եւ ի ժողովս ա-  
ղօթիցն ի ժամագիր ժամուն հասանել  
չմարթայցեն, եւ վանաց շօրն եւս ի  
վերայ հասեալ գիտացէ թէ այնպէս  
է, անդէն իսկ ի տեղւոջն ուր վաստա-  
կիցին, զՆստուծոյ պաշտօնն կատա-  
րեսցեն ծնդովք կրկնելովք աստուա-  
ճեղէն դողութեամբն:

Ը. Այնպէս եւ որ ի ճանապարհ ինչ

ուղղեալ իցեն, ոչ անցցեն առ նորօր  
ժամքն պատշաճեալ. այլ որպէս մար-  
թիցին առնիցեն, եւ զչափ ծառայու-  
թեանն ընու մի անփոյթ առնիցեն :

Գ Լ Ո Ւ Խ ԾԱ

Պ.ԸՍՆ ԵՂ.ԲԸԲՑ ՈՐ ՈՉ ԻՆՉ ԿԸԲԻ ՀԵՈՒ

ԳՆԸՅՅՆ

Ը. ԵՂ.ԲԸԲՑ որ ի գործ ինչ ուրեք  
առարկիցին եւ ակն ունիցին ի նմին իսկ  
աւուր գառնալ այսրէն ի վանսն, մի  
իշխեսցեն արտաքոյ հայ ուտել յուճմէ  
եւ աղաչիցին, բայց եթէ յիւրեանց  
չօրէն ինչ հրամայիցի նոցա :

Ի. Ապա թէ ոչ որոշեացին ի հաղոր-  
դութենէ :

Գ Լ Ո Ւ Խ ԾԲ

Պ.ԸՍՆ ՏԵՂ.ԲՈՅՆ ՈՐԻ ԸՂ.ՕԹՍ Ի

Պ.ԸՆՍՆ ՄԸՏՈՒՑԸՆԻՑՆ

Ը. ԱՅՆՊԻՍԻ իցէ աղօթից տեղին,  
որպէս եւ կոչին իսկ :

Ի. Մի ինչ անդ գործիցի կամ պա-  
տրաստիցի. այլ անդէն յետ պաշտա-  
մանն վճարելոյ մեծաւ լուութեամբ ե-  
լեալ ամենեցուն երկիր պաղանիցեն Առ-  
տուծոյ, որպէս զի մի իւրով անպիտա-  
նութեամբն զք խափան ինչ միւսումն,  
որ կամիցին թերեւս աղօթս առանձինն  
մատուցանել, լինիցի : Այլ որ կամիցին

դք աղօթս ի ծածուկ մատուցանել, մըտեալ յաղօթս կայցէ միամտութեամբ: Մի մեծագոյ բարբառով, այլ արտասուօք եւ մտադիւրութեամբ սրտիւ:

Գ. Իսկ որ ոչն կամիցի զայնպիսի ինչ, մի թողցի յետաղօթիցն վճարելոյ յամել անդէն յաղօթից տեղւոջն, որպէս ասացաւ. զի մի խափան միւսումն լինիցի:

Գ Լ ՈՒ Խ Խ ԾԳ

ՊԱՍՆ ԶՆԻԻՐԱՆ ԲՆԴՈՒՆՆԱՅ

Ը. ՕՒՄԵՆԱՅՆ Հիւրան որ դայցեն իբրեւ զՔրիստոս պարտ է ընդունել. զի ինքն իսկ ասելոց է, Օտար էի, եւ ժողովեցէք զիս<sup>175</sup>:

Ի. Պարտ է ամենեցուն ըստ իւրում արժանին պատուադիր լինել. այլ եւս առաւել ընտանեացն հաւատովք եւ նժդեհիցն:

Գ. Արդ յորժամ պատմեցի եթէ Հիւր եկն, Առաջնորդն կամ եզրարքն ընդ առաջ գնայցեն նորա ամենայն խրնամով սիրոյ: Աւ զառաջինն ի միասին յաղօթս կացեալ, կենակից ընդ միմեանքս լինիցին խաղաղութեամբ:

Գ. Այլ զհամբոյր խաղաղութեան յառաջ քան զաղօթսն չէ պարտ մատուցանել, զի մի ցնորք ինչ սատանայականք ի ներքս մտանիցեն: Աւ յող-



ջոյնն տալ ամենեւին ցածութիւն ըն-  
ծայեցուցանիցի :

Ե. Ամենայն հիւրոցն եկելոց եւ որ  
մեկնելոցն իցեն, խոնարհեցուցեալ ըզ-  
դլուխ, կամ ողջոյն իսկ մարմնովն կործան  
յերեսս, Քրիստոսի որում զընդունե-  
լութիւնն արարին, երկիր պագանիցեն :

Զ. Օ հիւրսն զոր ընկալան, առեալ  
ածիցեն յաղօթս. եւ ապա բազմեցի  
ընդ նոսա Առաջնորդն կամ որում նայն  
հրաման տայցէ :

Է. Աւ ընթերցցին առաջի հիւրոյն  
զաստուածեղէն օրէնսն զի շինեսցի :  
Աւ յեա այնորիկ ամենայն մարդասի-  
բութիւն ցուցանիցի :

Ը. Օ պահս վասն հիւրոյն լուծանի-  
ցէ Առաջնորդն, բայց եթէ յորժամ  
զլխաւոր ինչ օր պահոցն իցէ, զոր շի-  
ցէ արժան լուծանել : Իսկ եղբարքն ի  
սովորական պահսն կայցեն :

Թ. Չ ուր ի ձեռս հիւրոցն Աբասն  
արկանիցէ : Իսկ զոտսն լուանալ ոչ Ա-  
բասուն միայն գործ իցէ, այլ եւ ող-  
ջոյն իսկ ժողովոյն : Աւ յեա ստիցն լուա-  
նալոյ սաղմոսեցեն ասելով, թէ Բն-  
կալաք, Աստուած, զողորմութիւն քո  
ի մէջ տաճարի քում<sup>176</sup> :

Ժ. Այլ յորժամ աղքատաց ինչ եւ  
նժգեհից ընդունելութիւն լինիցի, մե-  
ծաւ եւս հոգաբարձութեամբ փոյթ

յանձին կալցին. քանզի ի նոսա առաւել զՔրիստոս ընդունիցին. զի մեծատանց ահն իսկ ինքնին զպատին պահանջիցէ :

Բժ. Խոհակերոց Բքասուն եւ հիւրոցն ուրոյն առանձինն իցէ, զի մի յորժամ յանկարծ ինչ ժամու հասանիցեն ի վերայ հեւրքն, որ չպակասեն ի վանացն, աշխատ ինչ եղբարքն լինիցին :

Բժ. Իսկ ի գործ խոհակերոցին երկու եղբարք մտանիցեն ցամ մի. զի զըսպաս պաշտամանն այնորիկ բարիոք ի գլուխ հանիցեն :

Բժ. Այնպիսեացն, որպէս ինչ եւ պիտոյն իցէ, շնորհեսցին մխիթարութիւնք. զի առանց արանջերոյ պաշտեացեն :

Բժ. Աւելարձեալ յորժամ փոքր ինչ ունիցին աշխատութիւն, ելանիցեն ի գործ, յորժամ հրամայիցին: Աւելոչ յայսոսիկ միայն, այլ եւ յամենայն իսկ պաշտամունս վանացն գոյն պայման պահեսցի: Արպէս զի թէ կարօտիցին ինչ, շնորհեսցին նոցա մխիթարութիւնք. եւ յորժամ դարձեալ դատարկացին, հնազանդեսցին հրամանատուին :

Բժ. Այնպէս եւ զխուց հիւրոցն նշանակեալ ունիցի եղբայրն յորոյ ի սրաի Բսաուծոյ երկեւզն տիրիցէ :

ՉԺ. Ի իցին անդէն մահի՞ճք յար-  
դարեալք բաւականք, որպէս զի տունն  
Լստուծոյ յիմաստնոց անտի իմաստու-  
թեամբ իցէ յօրինեալ:

ԷԺ. Ինչ հեւրսն ոչ խիք հաղորդեա-  
ցի եւ ոչ խօսակից լինիցի, որում շիցէն  
հրամայեալ: Իսկ եթէ ընդ առաջութեք  
պատահիցէ կամ տեսանիցէ, խոնարհու-  
թեամբ, որպէս եւ ասացան, ողջոյն  
տուեալ միմեանց եւ խնդրեալ զօրհ-  
նութիւն, զանց առնիցէ. եւ ասաս-  
ցէ թէ չէ նմա համարձակ ընդ հեւրսն  
խօսել:

### Գ Լ Ո Ի Խ Ծ Դ

ԹԷ ՊԵՐՏԻՅԻ ԸՐԵՂԱՅՆ ԹՈՒՂԱԹՍ ԿԸՄ

ՕՐՀԱՌԻԹԻՒՆՍ ԲՆԵՌԻՆԵԼ,

Ը. ՍԻ բնաւ լինիցի վանականին իշ-  
խանութիւն ի հօրէ կամ ի մօրէ կամ  
յայլոց առնուլ ինչ կամ տալ նոցա,  
թուղթս եւ տուրս կամ թէ այլ ինչ  
գոյզն ընծայս առանց Լքասուն հրա-  
մանի: Որպէս զի թէ եւ յիւրոց իսկ  
ճնողաց անտի մատուցանիցի ինչ նմա,  
մի իշխեսցէ, մինչ չեւ յայտ արարեալ  
նախ Լքասուն, ընդունել:

Թ. Իսկ հրամայել տալ ինչ եւ կամ  
դատուեալն ընդունել, իշխանութիւն իցէ  
Լքասուն. զի մի արամեացի եղբայրն ո-

բում գուցէ ուղղեալ իցէ. զի մի պատ-  
ճառս տացէ դիւին:

Գ. Այլ թէ յայլ ազգ ինչ ոք մը-  
տաբերիցէ, ընդ կանոնական խրատուն  
անկանիցի:

### Գ Լ Ո Ի Խ Ծ Ե

Պ.ԱՍՆ ՀԱՆԿԱԿԱՆ ԵՒ ԿՕՇԿԱՆ ԵՂՈՒՄՆԵՆ

Ը. Օգտեսք ըստ հանգամանաց տե-  
ղւոյն ուր բնակինն, եւ ըստ օղոցն խառ-  
նուածոյ տացին եղբարցն: Վանզի ի  
դաւառս յորս ցուրտն տիրիցէ, առաւել  
է կարօտութիւնն, քան ի ջերմաղոյնն:  
Իսկ զայսոսիկ ընտրել Առաջնորդին է:

Բ. Այլ մեզ շատ թուի ի շափ ինչ  
տեղիս քուսիթայ մի, եւ պարեգօտ  
տալ արեղայից ըստ մարդաթուի: Վու-  
սիթայն ձմերանի թաւ, իսկ յամարայնի  
լոկ կամ հին. եւ Հանդերձ մի վասն  
վաստակոց: Իսկ ոտից ազանեւիք, օղք  
եւ զանկապանք:

Գ. Օտոցա ամենեցուն զգոյնն եւ  
զխոշորութիւն ընտրել մի ինչ պատ-  
ճառեցեն վանականք. այլ որպիսի ինչ  
ի տեղւոջն ուր կայցեն, դտանիցի, եւ  
կամ զոր դիւրագնի դնել մարթ իցէ:

Դ. Այլ յանձին կալցի Աբասն նայ-  
ել, զի մի կարճ ինչ հասակի ազանե-  
լեացն զգեստքն լինիցին, այլ կշիռ  
պատշաճեալ:

Ե. Որք միանգամ զնորսն ընդունիցին, զՏնտիսն տացեն վաղվաղակի ի տուն պատմութեանս վասն աղքատացնս Քանդի շատ է աբեղայի երկուս պատմութեանս եւ երկուս քուսիթայս ունել վասն դիշերոյ եւ վասն լուանալոյ. քանդի որ ինչ յաւելուցուն, աւելորդ է եւ ի բաց պարտ է հասանել:

Զ. Աւ զօգսն եւ որ այլ ինչ հնտաիք իցեն, յորժամ զնորսն առնուցուն, տայցեն այսրէն յետս:

Է. Անդրավարտիս այնոքիկ որ յուղի անկանիցին, ի տանէ անտի պատմութեանս առնուցուն. եւ յորժամ դարձցին, լուացեալ յիւրեանց տեղինն գիցեն:

Ը. Այլ քուսիթայքն եւ պարեգօտք, լինիցին երբեմն փոքր մի լաւ քան զայնոսիկ զոր միշտն ունիցին. զորս, որ ի ճանապարհ ելանիցեն, ի տանէ պատմութեանս առնուցուն. եւ յորժամ դառնայցենն տայցեն այսրէն յետս:

Թ. Իսկ ի հանդերձանս անկողնոց բաւական իցեն պրտուեայ, տառատակ, պատառակալ եւ բարձ:

Ժ. Սակայն պարտ եւ պատշաճ է Աբասուն ստէպ ստէպ զանկողինսն տեսանել, թէ դատանիցի ոք ուրեք որ ունիցի ինչ առանձինն: Աւ եթէ գտանիցի ինչ զոր ի շօրէն շիցէ առեալ, անհնարին պատժովք պատժեսցի:

Եւ զի արմատաբի տակակոսոր  
 Հատանիցին շարիքս զամենայն ինչ որ  
 կարեւորն ինչ ապցէ Եւրասն, այս ինքն  
 է, քուսիթայ, պատմուճան, օղս, զան-  
 կապան, վարախս, զանակ, զբափիսն որ  
 է գրիչ, ասեղն, վարչամակ, տախտակս.  
 զի ամենայն կարօտութեան բարուրք  
 բարձցին ի միջոյ:

Եւ զարժան է Եւրասուն զայն  
 բան զպրութեանց Եւսաքելոյն ածել  
 միշտ զմտաւ. Բաշխէին, ասէ, իւրա-  
 քանչիւր որպէս ումեք պիտոյ ինչ լի-  
 նէր: Ասան որոյ եւ Եւրասն բնդ տկա-  
 րութիւն կարօտելոցն պարաի նայել,  
 եւ ոչ բնդ շարութիւն կամաց նախան-  
 ձտացն: Եւ յամենայն խորհուրդս  
 իւր գիտասցէ զի Եստուծոյ Համարս  
 ունի տալ:

### Գ Լ Ի Խ Ծ Զ

#### ՊԵՂԵՆ ՍԵՂԵՆՈՅ ԵՐԵՄԻԱՆ

Եւ ՍԵՂԵՆ Եւրասուն Հանապաղ բնդ  
 Հիւրոցն եւ բնդ պանդխտոց լինիցի:  
 Եւ յորժամ սակաւ իցեն Հեւրքն, զօ-  
 րքս կամիցի Եւրասն կոչել յեղբարցն,  
 այն նորա իշխանութեան է:

Եւ Բայց զմի ոք յերիցադունաց ան-  
 տի կամ զերկուս փոյթ յանձին կալցի  
 անդէն առ եղբարսն թողուլ միշտ վա-  
 օրն խրատու:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Է

ՊԵՏՆ ԵՐՈՒԵՍԵՂԻՏԵՑ ՊԵՆԵՑՆ

Ը. ՂԱՐՏԵՐՔ ԵԹԷ զտանհիցին ի Վանսրն, ամենայն խոնարհութեամբ իւրեանց արուեստին սկիցեն, եթէ տացէ նոցա Մ.բասն հրաման:

Բ. Աթէ ընդ իւրոյ արուեստին գիտութիւն ոք մեծամտիցէ, այնու զի նրպաստ ինչ վանացն կարծիցէ լինել, զայնպիսին յիւրմէ արուեստէն բանայցեն, եւ մի եւս յայն պարտպեցէ. բայց եթէ գուցէ խոնարհեալ վերբուտին հրաման ի շօրէն աւնուցու:

Գ. Այլ թէ վաճառել ինչ կայցէ ի գործոց արուեստագիտացն, տեսցեն այնոքիկ ընդ որոց ձեռն այնք անցանիցեն, զի մի նենդ ինչ յանդգնիցին գործել: Յուչ լիցին հանապազ Վնանիայ եւ Շափիրայ իրքն<sup>177</sup>, զի մի մահըն զոր նոքոյ ի մարմնի կրեցին, սաքա կամ թէ բնաւ ամենեքին իսկ որ հնարս ինչ նենդաւ զվանացն իմանայցեն, յոգիսն կրիցեն:

Դ. Այլ եւ ի գինս մի ազատութեան շարիք ի ներքս մտանիցեն. այլ միշտ փոքր մի եւս զիւրազնի քան զոր աշխարհիկքն վաճառիցեն, տացեն. Գ ի յամենայնի Մատուած փառաւորեցի<sup>178</sup>:

Լ. ՅՈՐԺԱՄ նորոգ դք ի վանս դայցե, շէ պարտ մուտս նմա վաղվաղակի շնորհել. այլ որպէս Լուսքեալ ասէ, Փորձել զոգիսն թէ յՆստուծոյ իցեն<sup>179</sup>:

Ի. Լայց թէ եկեալ կայցէ եւ բախիցէ անդադար, եւ տեսանիցեն եթէ անսայ եւ տեւէ յիւրում խնդրուածսն, եւ թշնամանաց ինչ որ նմայն դիպիցին, եւ դժուարութեանց ի վանսն մտանելոյ ժուժկալեալ համբերութեամբ տանիցի, յետ շորից կամ հինգ աւուրց յանձըն առնուցուն ընդունել:

Գ. Այլ կայցէ ի խցի հիւրոցն սակախնչ աւուրս. եւ յետ այնորիկ ի Նորեկաց խուցն անցանիցէ, ուր խորհեսցին եւ ուտիցէ եւ ննջիցէ:

Դ. Իսկ երիցադոյնն որ վասն նորա կարգեալ իցէ, այնպիսի ինչ դք լինիցի, զի ի շահել զոգիսն բաւական իցէ. որ յամենայնի դէտ ի քնին աշակերտելոցն կայցէ ճշդիւ, եւ փոյթ յանձին կալցի տեսանել թէ արդարեւ զՆստուած խնդրիցէ, եւ յՆստուծոյ պաշտօնն փոյթ իցէ եւ պատրաստ ի հնազանդութիւն եւ ի տանել թշնամանաց:

Ե. Վանխաւ ասացեն նմա զամենայն խիստսն եւ զդժնդակս, որովք



Ճանապարհ առ Աստուած հարդիցի :  
 Աթէ խոստացի տեւել բաւել ի հաս-  
 տատութեան մտայն , յետ երկուց ամ-  
 սոց բոլորման , ընթեռնուցուն նմա ըզ-  
 կանոնս զայստիկ կարգաւ եւ սասա-  
 ցեն . Ահաւասիկ օրէնք , ընդ սրովք զի-  
 նուորելն կամիս . եթէ կարիցես պահել ,  
 մուտ . ապա թէ ոչ կարես , ինքնակամ  
 ի բաց դնա :

Գ . Աթէ տակաւին կայցէ հաստա-  
 տուն , յայնժամ ի խուցս՝ Նորեկայն ուր  
 վերագոյն ստացաւ , առեալ ամիցեն ,  
 եւ փորձեսցեն միւսանդամ ամենայնի  
 համբերել :

Է . Աւ զկնի վեցից ամսոց շրջանաց  
 անցանելոյ , ընթեռնուցուն նմա միւս-  
 անդամ զկանոնսն . զի զխասացէ թէ  
 յինչ մտանիցէ :

Ը . Աւ յորժամ դեռ եւս անսոյցէ  
 եւ կայցէ , յետ շորից ամսոց զնոյն կա-  
 նոնսն ընթեռնուցուն նմա միւսանդամ :

Թ . Աւ եթէ անձամբ յանձնէ հաս-  
 տատեալ զրնաւն սր նմայն հրամայիցի ,  
 զնիցէ ի մտի պահել , յայնժամ այնու  
 հետեւ ընդունիցին ի ժողովն : Վիտաս-  
 ցէ զի ըստ օրինի կանոնայն հաստա-  
 տելոց , յայնժմ օրէ հետէ ի վանայն ար-  
 տաքս ելանել չէ նմա համարձակ :

Ժ . Աւ մի խստապարանոց լծրնկէյ  
 կանոնայն լինիցի , զորս այնչափ ընդ-

երկար խորհրդովն կարող էր առնուլ եւ չառնուլ :

Բ.Ժ. Իսկ զոր բնդունելոցն իցեն, յաղօթից տեղւոջն առաջի ամենեցուն զիւր հաստատութիւնն, եւ զվարուց իւրոց փոփոխումն, եւ զհնազանդութիւնն առաջի Մատուծոյ եւ սրբոց նորա խոստովանեացի. որպէս զի թէ այլ ազգ ինչ ուրեք զսրծիցէ, զխոսացէ թէ ի նմանէն զոր արհամարհեացն, դատապարտելոց է :

Բ.Ժ. Աւ վասն իւրոյ խոստմանն առնիցէ Պաղատանս յանուն սրբոցն որոց նշխարքն դատնիցին անդէն առաջի Մրասուն :

Բ.Ժ. Աւ զՊաղատանաց նամակն իւրով ձեռամբ գրեցէ. կամ թէ դպրութիւն ոչ գիտիցէ, այլ ոք աղաչեալ ի նմանէ գրիցէ : Աւ ինքն նորեկն ձեռնադիր արկեալ իւրով ձեռամբ առաջի սեղանոյն դնիցէ :

Բ.Ժ. Աւ մինչդեռ նա զայն դնիցէ, սկիզբն արացեն զայս կցուրդս ասել. Բնկալ զիս Տէր բոս բանի քում եւ կեցո. եւ մի յամօթ առնեք զիս ի յուսոյ իմմե՞<sup>160</sup>. եւ զսոյն ողջոյն իսկ ժողովն կրկնեալ, յարեացեն զկնի փառք շօր :

Բ.Ժ. Յայնժամ խոնարհեալ նորեկ եղբայրն անկցի առ ոտս ամենեցուն, զի աղօթս վասն իւր առնիցեն. եւ ի

Ժամէն յայնմանէ ի միաբանութեան  
Համարիցի :

9.Ճ. Օ ինչսն , եթէ երբեք ունիցի,  
կամ աղքատաց բաշխեսցէ, յառաջադոյն  
